



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ

2021թ. ՀՈՒՆԻՍԻ 20-Ի

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Սույն հետազոտությունն անցկացվել է IMS (International Media Support) կազմակերպության աջակցությամբ: Ներկայացվող հետազոտության բովանդակությունը լիովին Երևանի մամուլի ակումբի պատասխանատվության ներքո է և պարտադիր չէ, որ արտահայտի IMS-ի տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2021թ. ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	3
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	8
Երրորդ փուլ. 2021թ. ՀՈՒՆԻՍԻ 20 - ՀՈՒԼԻՍԻ 4	8
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	12
Երկրորդ փուլ. 2021թ. ՀՈՒՆԻՍԻ 7-18	12
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	18
Առաջին փուլ. 2021թ. ՄԱՅԻՍԻ 31 - ՀՈՒՆԻՍԻ 6	18
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ	21
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	22
ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԶԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	33
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ Երրորդ փուլ. 2021թ. ՀՈՒՆԻՍԻ 20 - ՀՈՒԼԻՍԻ 4	35
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ Երկրորդ փուլ. 2021թ. ՀՈՒՆԻՍԻ 7-18	44
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ Առաջին փուլ. 2021թ. ՄԱՅԻՍԻ 31 - ՀՈՒՆԻՍԻ 6	53

2021Թ. ՀՈՒՆԻՄԻ 20-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2021թ. ՀՈՒՆԻՄԻ 20-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին մասնակցել են 21 կուսակցություն և 4 դաշինք:

2021թ. հունիսի 27-ին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարեց ՀՀ ԱԺ ընտրությունների քվեարկության վերջնական արդյունքները: Կուսակցությունների/դաշինքների ստացած ձայները բաշխվել են հետևյալ կերպ (*տոկոսներով*).

	Կուսակցություն/դաշինք	%
1.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	53.91
2.	«Հայաստան» դաշինք	21.09
3.	«Պատիվ ունեմ» դաշինք	5.22
4.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	3.95
5.	«Հանրապետություն» կուսակցություն	3.03
6.	«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	1.54
7.	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք	1.5
8.	«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն	1.49
9.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	1.22
10.	«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն	1.22
11.	Ազատական կուսակցություն	1.17
12.	«Հայոց հայրենիք» կուսակցություն	1.03
13.	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն	0.95
14.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	0.39
15.	«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	0.36
16.	«Ազատ հայրենիք» դաշինք	0.32
17.	«Արդար Հայաստան» կուսակցություն	0.31
18.	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	0.31
19.	«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	0.3
20.	Հայաստանի եվրոպական կուսակցություն	0.19
21.	«Ազատություն» կուսակցություն	0.14
22.	«Վերելք» կուսակցություն	0.1
23.	«Միասնական հայրենիք» կուսակցություն	0.08
24.	«Ազգային օրակարգ» կուսակցություն	0.06
25.	«Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն	0.06

Այսպիսով, ՀՀ Ազգային ժողով անցել են մեկ կուսակցություն, որը հաղթահարել է 5 տոկոսի շեմը, և երկու դաշինք: «Պատիվ ունեմ» դաշինքը, թեև չի հաղթահարել 7 տոկոսի շեմը, սակայն անցել է խորհրդարան՝ որպես առավելագույն թվով ձայներ ստացած երրորդ ուժ:

107 պատգամավորական մանդատները բաշխվել են հետևյալ կերպ.

- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 71 մանդատ,
- «Հայաստան» դաշինք՝ 29 մանդատ,
- «Պատիվ ունեմ» դաշինք՝ 7 մանդատ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԹԻՄԸ ՆՇՈՒՄ Է, որ քաղաքական պայքարի սրությամբ և ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի աննախադեպ քանակով էր (25) պայմանավորված այն հանգամանքը, որ ԶԼՄ-ներն ակտիվորեն լուսաբանում էին քարոզարշավը: Լրատվական դաշտում առճակատումն սկսվել էր պաշտոնական քարոզարշավից շատ առաջ և առանձնահատուկ ինտենսիվ բնույթ ստացավ, մասնավորապես, երբ որոշվեցին պատգամավորության բոլոր թեկնածուները*:

Հանրային ուշադրության կենտրոնացումը երկու քաղաքական ուժերի՝ «Հայաստան» դաշինքի և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նկատմամբ, անդրադարձել է ԶԼՄ-ներում նրանց լուսաբանման վրա: Դա հատկապես ակնհայտ էր մինչև 2021թ. հունիսի 7-ը, երբ սկսվեց պաշտոնական նախընտրական արշավը: Հենց երկու առաջատարների և ընտրապայքարի մասնակից մյուս 23-ի միջև խզումը մշտադիտարկման այս փուլում թույլ չէր տալիս խոսել պաշտոնական քարոզչությանը նախորդող շրջանում այս քարոզարշավի հավասարակշռված լուսաբանման մասին:

Պաշտոնական քարոզարշավի կարճաժամկետ (12 օր) լինելով պայմանավորված, երբ օրենսդրությամբ սահմանվում է հանրային մուլտիպլեքսում ընդգրկված վերգետնյա հեռարձակողների կողմից ընտրությունների բոլոր մասնակիցներին լուսաբանման հավասար հնարավորությունների տրամադրումը, նմանատիպ կարգավորման բացակայությունը նախորդող ժամանակահատվածում հանգեցնում է քաղաքական ուժերի նկատմամբ ուշադրության էական անհամամասնության: Օրենսդրության այս բացն առավել սրությամբ դրսևորվում է արտահերթ ընտրությունների ժամանակ, որոնք անցկացվում են շատ ավելի սեղմ ժամկետներում, քան հերթական ընտրություններն են: Այս հանգամանքը բազմիցս նշվել է դիտորդների կողմից, մասնավորապես, Երևանի մամուլի ակումբի մեդիա հետազոտություններում: Մի շարք քաղաքական ուժերի համար երկար ժամանակով եթերի սահմանափակ հասանելիությունը, ներառյալ՝ ընտրությունների մասին հայտարարումից հետո, հազիվ թե հնարավոր է փոխհատուցել նախընտրական քարոզարշավի ոչ լիարժեք երկու շաբաթվա ընթացքում, նույնիսկ եթե այդ ժամանակահատվածում ապահովված է հավասարակշռված լուսաբանում:

ՈՐՊԵՏ ԱՅՍ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ դրական միտումներ, որոնք արձանագրել է ԵՄԱ մշտադիտարկման թիմը, կարելի է նշել հետևյալը.

- Հետազոտված ԶԼՄ-ները, լուսաբանելով նախընտրական միջոցառումները և հեռարձակելով քաղաքական գործիչների և այլոց արտահայտությունները, որպես կանոն, ձգտում էին, եթե դա ուղիղ եթեր չէր, փոխանցել այդ արտահայտությունների հիմնական միտքը՝ հնարավորինս բացառելով կոպիտ վիրավորանքները, հայհոյանքը, աստելության լեզուն:
- Հետազոտված հեռարձակողների նյութերի բովանդակությունը ծանրակշիռ հիմքեր չի տալիս խոսելու այս քարոզարշավի ընթացքում մեդիառլորտի վրա ազդեցություն գործելու համար վարչական ռեսուրսի օգտագործման մասին: Ընդ որում, ընտրությունների տեղական դիտորդները բերում էին զանազան նախընտրական միջոցառումների

* Մշտադիտարկման երեք փուլերի տվյալները ներկայացված են ստորև:

կազմակերպման ժամանակ վարչական ռեսուրսի օգտագործման բազմաթիվ վկայություններ:

- Նախընտրական բանավեճերը, որոնք կազմակերպվել էին ինչպես Հանրային հեռուստատեսությունը, այնպես էլ մասնավոր հեռուստաալիքները, չնայած առանձին միջադեպերի առկայությանը, անցնում էին էականորեն ավելի կառուցողական մթնոլորտում և քաղաքական մշակույթի որոշակի սկզբունքներին հետևելու շատ ավելի մեծ պատրաստակամությամբ, քան նախընտրական քարոզչության շրջանակներում կազմակերպվող հանրային միջոցառումները:
- Հետազոտված հեռարձակողների հաղորդումներում գրեթե բացակայում էին այն դրվագները, որտեղ երեխաները օգտագործվում էին նախընտրական քարոզչության նպատակներով: Թեև հանրության հետ հանդիպումներում, հատկապես Հայաստանի մարզերում, դատելով առցանց ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում տարածված տեսալուսանկարներից, նախընտրական պայքարի մասնակիցները, մասնավորապես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, բավական հաճախ էին դիմում նման մեթոդների:

2021թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ մշտադիտարկումն արձանագրել է քաղաքական ուժերից մեկին՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը նշանային բնութագրիչներով անդրադարձների աննախադեպ բացասական հաշվեկշիռ: Այս կուսակցության լուսաբանման նմանատիպ ուղղվածության համեմատությունը 2021թ. հունիսի 20-ի քվեարկության արդյունքներով նրա համոզիչ հաղթանակի հետ թույլ է տալիս լուրջ կասկածի տակ առնել ագրեսիվ տեղեկատվական արշավի արդյունավետությունը, որին կառավարող քաղաքական ուժը արժանացավ ոչ միայն նախընտրական շրջանում, այլ նաև դրան նախորդող ամիսներին: Ավելին, չի կարելի բացառել, որ դա հանգեցրել է սպասվածից հակառակ արդյունքի: Այստեղ հարկ է նշել, որ «Քաղաքացիական պայմանագիր» նախընտրական քարոզարշավին հատուկ էր ոչ պակաս ագրեսիվությունը, սակայն դա մշտադիտարկման քանակական տվյալներում համարժեք արտացոլում չգտավ այն բանի հետևանքով, որ այս կուսակցության հասցեին բացասական արտահայտությունները բարձրաձայնվում էին քարոզարշավում ներգրավված շատ ավելի մեծ թվով սուբյեկտների կողմից:

Չեզոք լուսաբանումից պատճառաբանված շեղումները արձանագրվել են նաև ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի դեկավարած «Հայաստան» դաշինքի և «Պատիվ ունեն» դաշինքի դեպքում, որը նույնականացվում է ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի հետ, ինչպես նաև «Հայ ազգային կոնգրես» կուսակցության դեպքում, որը գլխավորում է ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Այս հանգամանքն ապացուցում է, որ հիմնավորված է 2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների տարածված բնութագիրը՝ որպես «նախկինների և ներկաների» պայքարի, ինչպես նաև այն, որ ամբողջ ընտրարշավի թեմատիկական կենտրոնացված էր Հայաստանի նորագույն պատմության (վերջին 30 տարվա) գնահատականների վրա: Ընդ որում, ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերի միջև բանավեճերի կենտրոնում են եղել Լեոնային Ղարաբաղի և երկրի անվտանգության հիմնախնդիրները, ինչը պայմանավորել է տեղեկատվական առձակատման առանձնահատուկ սրությունը և զգայական բնույթը:

Մինևույն ժամանակ, հարկ է նշել, որ դեպքերի ճնշող մեծամասնության մեջ նշանային բնութագրիչներով լուսաբանումը ձևավորվում էր գրեթե բացառապես նախընտրական արշավի

անմիջական մասնակիցների կողմից հայտարարությունների տարածման միջոցով. լրագրողները, որպես կանոն, խուսափում էին գնահատողական դատողություններից:

ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽՈՐԴ ԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉԱՐՇԱՎՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ընդգծեց նաև առաջատար հեռարձակողների քաղաքական դերի հետ կապված մի շարք ընդհանուր միտումներ: Հայաստանի Հանրային հեռուստատեսությունը, որը հետագոտված բոլոր լրատվամիջոցներից ամենաակտիվն է լուսաբանել 2021 թվականի ընտրությունները, այսպիսով գործել է համեմատաբար նոր կարգավիճակում: 2012թ. խորհրդարանական և 2013թ. նախագահական ընտրություններում Հանրայինը աննախադեպ պասիվություն էր ցուցաբերել: Մեդիա փորձագետներն այս երևույթը բացատրեցին այն հանգամանքով, որ հայաստանյան քաղաքական վերնախավը նախընտրական քարոզչության հիմնական ծանրությունը տեղափոխել էր մասնավոր հեռուստատվիքների վրա: Նույնիսկ 2015թ. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի լուսաբանման հարցում Հանրայինի Առաջին ալիքը նախաձեռնությունը զիջել էր «Կենտրոնին» և «Երկիր Մեդիային»: Սակայն 2018թ. «Թավշյա» հեղափոխությունից հետո հանրային հեռուստատեսությունը վերադարձրեց ընտրությունների լուսաբանման և ընտրազանգվածին տեղեկացնելու իր առաջնային դիրքը:

Իրենց հերթին, «Կենտրոնը» և «Երկիր Մեդիան», փաստացի լինելով մասնավոր ընկերություններ, վերջին տարիներին գործել են որպես «կուսակցական հեռարձակողներ»: Սա որոշակի հակասության մեջ էր ՀՀ օրենսդրության հետ, որը քաղաքական ուժերին արգելում է հիմնել հեռուստա- և ռադիոընկերություններ: Սակայն 2021թ. ընտրություններում այս հեռարձակողները տարբեր կերպ վարվեցին: Որպես համազգային հեռուստատվիք, որը կապված է «Դաշնակցություն» կուսակցության հետ, «Երկիր Մեդիան» առանցքային դեր ստանձնեց՝ տեղեկատվական հարցում աջակցելու «Հայաստան» դաշինքին, որի մաս կազմեց այս կուսակցությունը: Այլ կերպ ասած, նրա պահվածքը կարելի է ավանդական համարել ինչպես նախընտրական, այնպես էլ հետընտրական շրջանում:

«Կենտրոն» հեռուստաընկերությունը նախորդ տարիներին լուսաբանման ինտենսիվությամբ մրցակցում էր «Երկիր Մեդիայի» հետ, սակայն այս անգամ համեմատաբար փոքր ուշադրություն է ցուցաբերել քարոզարշավին: Եթե նախկինում «Կենտրոնի» ուշադրության կիզակետում ընդգծված կերպով եղել է այս ալիքի հետ նույնականացվող «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, ապա այժմ, նախընտրական քարոզչության ողջ ժամանակահատվածի ցուցանիշներով, նրանից առաջ են անցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը և «Հայաստան» դաշինքը: Հետընտրական շրջանում ևս այս հեռարձակողը չի ընդգծել հունիսի 20-ի քվեարկության արդյունքների մասին «Բարգավաճ Հայաստանի» դիրքորոշումը: Հնարավոր է, որ գոյություն ունի որոշակի կապ այս հանգամանքի և ԲՀԿ-ի համեմատաբար համեստ քարոզարշավի միջև: Կուսակցությունը 2007-ից մինչև 2018թթ. անփոփոխ անցել է ՀՀ Ազգային ժողով և թվով երկրորդ խմբակցությունն է ունեցել, իսկ այս անգամ նույնիսկ չի հաղթահարել հինգտոկոսանոց անցումային շեմը:

ԵՄԱ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ չի նախատեսել «լռության օրը» (2021թ. հունիսի 19) և քվեարկության օրը (2021թ. հունիսի 20) օրենսդրական սահմանափակումների խախտումների քանակական ուսումնասիրություն: Մասնավորապես, ժամը 20.00-ին տեղամասերի փակումից 44 ժամ առաջ ՀՀ ընտրական օրենսգրքին արգելում է քարոզչության ցանկացած ձև: Մինչդեռ, այս ամբողջ ժամանակահատվածը լեցուն էր պատգամավորության թեկնածուների, քաղաքական գործիչների, լրագրողների և այլոց մասնակցությամբ բազմաթիվ այնպիսի դրվագներով, որոնք իրավամբ կարող էին քարոզչություն համարվել: Այս դրվագներից մի քանիսը հայտնվել են նաև հետագոտված հեռարձակողների եթերում: Նշված հանգամանքը թույլ է

տալիս եզրակացնել, որ, հաշվի առնելով հաղորդակցական միջավայրի էական փոփոխությունը, «լռության օրվա» կանոնները կարող են պահպանվել միայն այն դեպքում, եթե ընտրական գործընթացի բոլոր մասնակիցները գիտակցում են դրանց կարևորությունը և կամավոր հետևում դրանց: Այս պայմանների բացակայության դեպքում համապատասխան օրենսդրական կարգավորման պահպանումը կորցնում է իր իմաստը, ավելին, դրա պարբերական անտեսումը նպաստում է իրավական նիհիլիզմի զարգացմանը այնպիսի կարևոր հասարակական-քաղաքական ինստիտուտի առնչությամբ, ինչպիսին են ընտրությունները:

Չնայած մի շարք խնդիրներին, 2021թ. ընտրությունների լուսաբանման նշված առանձնահատկությունները և միտումները ԵՄԱ մշտադիտարկման թիմին թույլ են տալիս գալ այն եզրակացությանը, որ նախընտրական քարոզարշավի մեղիա բաղադրիչը, առաջին հերթին՝ համազգային հեռարձակողների գործունեությունը, ավելի շատ էր համապատասխանել ՀՀ օրենսդրությանը և միջազգային չափանիշներին, քան այլ ինստիտուտների գործունեությունը և նախընտրական քարոզարշավն՝ ընդհանուր առմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երրորդ փուլ. 2021թ. ՀՈՒՆԻՍԻ 20 - ՀՈՒԼԻՍԻ 4

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ 2021թ. հունիսի 20-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների լուսաբանման մշտադիտարկումը, որն իրականացնում է Երևանի մամուլի ակումբը, ընդգրկում է հայկական համազգային բոլոր 6 հեռուստատեսությունները (Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք, Ա-ԹԻՎԻ, «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ») և Հայաստանի հանրային ռադիոն: Հետազոտությունն անցկացվել է երեք փուլով՝ նախընտրական շրջան (2021թ. մայիսի 31 - հունիսի 6), պաշտոնական նախընտրական քարոզարշավ (2021թ. հունիսի 7-18) և հետընտրական շրջան (2021թ. հունիսի 20-ին ընտրական տեղամասերը փակելու պահից մինչև հուլիսի 4-ը): Մույն հաշվետվության մեջ ներկայացվում են վերոնշյալ փուլերից երրորդի (*այստեղ և այսուհետև՝ մշտադիտարկման մեթոդաբանությունը տե՛ս «Ընդհանուր տեղեկություններ մշտադիտարկման մասին» բաժնում, մշտադիտարկման քանակական արդյունքները՝ «Աղյուսակներ» բաժնում*):

Հետընտրական շրջանում Երևանի մամուլի ակումբի մշտադիտարկման թիմը հետազոտել է քաղաքական ուժերի, իշխանական կառույցների, այդ թվում ընտրությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու պաշտոնական մարմինների, դիտորդական առաքելությունների և հայաստանյան հասարակության տարբեր խմբերի արձագանքը ընտրական գործընթացին և խորհրդարանական ընտրությունների ընթացքին և արդյունքներին:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՍՓՈՓԻՉ ՓՈՒԼԻ երկու շաբաթվա ընթացքում, ինչպես նաև բուն նախընտրական արշավի լուսաբանմանը (*մշտադիտարկման նախորդ փուլերի հաշվետվությունները տե՛ս ներքևում*) հետընտրական գործընթացներին առավելագույն ուշադրությունը ցուցաբերել է Հայաստանի Հանրային հեռուստատեսության Առաջին ալիքը: «Երկիր Մեդիա» և «Կենտրոն» հեռուստատեսությունները մի փոքր հետ են մնացել նրանից: Այս ցուցանիշով բոլոր երեք առաջատարներն էլ, նաև քվեարկությանը հաջորդող օրերին, շարունակում էին ընտրություններին հատկացնել ինչպես նորությունների թողարկումների սյուժեներ, այնպես էլ «հյուր տաղավարում» ձևաչափի հարցազրույցներ և բանավիճային ծրագրեր: Հետազոտության թեմային անդրադարձների հաճախությամբ Հայաստանի Հանրային ռադիոն չորրորդն էր, որին հաջորդում էին համապատասխանաբար «Շանթ», «Արմենիա» և Ա-ԹԻՎԻ հեռուստատեսությունները: Այս չորս հեռարձակողները հետընտրական իրավիճակը լուսաբանում էին հիմնականում լրատվական թողարկումների միջոցով: Ընդ որում, ի տարբերություն նախընտրական քարոզարշավի լուսաբանման, հետազոտված յոթ ԶԼՄ-ների միջև խզումը դիտարկման ամփոփիչ փուլի թեմային ուշադրության աստիճանի առումով ամենափոքրն էր (268 անդրադարձ առաջատարի՝ Հանրայինի Առաջին ալիքի մոտ և 102-ը՝ Ա-ԹԻՎԻ հեռուստատեսության, որն այս ցուցանիշով վերջինն էր):

11 ԽՄԲԵՐԻՑ, որոնք դարձել են մշտադիտարկման օբյեկտ, ըստ հետազոտված 7 հեռարձակողների հանրագումարային տվյալների, ընտրությունների գնահատականներին և արդյունքներին առավել ինտենսիվ անդրադարձել են ՀՀ պետական պաշտոնական մարմինները,

ներառյալ քաղաքական իշխանության, ընտրական հանձնաժողովների, իրավապահ մարմինների և այլ ներկայացուցիչներ: Համապատասխան հայտարարություններում և արտահայտություններում շեշտը դրվում էր ընտրությունների պաշտոնական արդյունքների վրա, ինչի պատճառով այստեղ գերակշռում էր նշանային բնութագրիչներ չպարունակող բովանդակությունը: Դեպքերի ճնշող մեծամասնությունը, երբ այս խմբի ներկայացուցիչների անդրադարձներում առկա էին նշանային բնութագրիչներ, վերաբերում էր ընտրական օրենսդրության արձանագրված խախտումներին, ինչը և պայմանավորել է դրական և բացասական գնահատականների հաշվեկշիռը հոգուտ վերջինի (6 ընդդեմ 86-ի): Եվ ընդհանրապես, որպես մշտադիտարկման օբյեկտ պայմանականորեն ընտրված բոլոր 11 խմբերի անդրադարձն էր ընտրախախտումների թեմային, որ կանխորոշել է բացասական գնահատականների գերակշռությունը (370` 73 դրականի դիմաց):

Երկրորդ ամենաակտիվ խումբը եղել են **անցումային շեմը չհաղթահարած քաղաքական ուժերի ներկայացուցիչները**, որոնք հետևաբար նաև ՀՀ Ազգային ժողովի նոր կազմում տեղեր չեն ստացել: Մի կողմից, նրանց թիվը շատ ավելին էր, քան խորհրդարան անցածներինը (համապատասխանաբար` 22 և 3), բայց այն փաստը, որ լրատվամիջոցները շարունակում էին հետաքրքրություն ցուցաբերել անցած ընտրությունների վերաբերյալ նրանց գնահատականների նկատմամբ, հարկ է դրական համարել:

Թեև հանրագումարով երկու այլ խմբեր («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, որը հաղթել է ընտրություններում և երկու դաշինքները, որոնք Ազգային ժողովում ընդդիմադիր խմբակցություններ են կազմելու) հետազոտված հեռարձակողների կողմից մի փոքր ավելի մեծ ուշադրության են արժանացել, քան հարաբերականորեն անհաջողակները, սակայն անդրադարձների հաճախության առանձին վերցրած ցուցանիշներով դրանք զիջել են խորհրդարան չմտած քաղաքական ուժերին: Վերջինների գնահատականները ընտրությունների վերաբերյալ ավելի հաճախ բացասական են եղել, քան դրական (համապատասխանաբար` 38 և 8): Ընդ որում, դրանց դեպքում նշանային բնութագրիչները հիմնականում ձևավորվել են ոչ թե կոնկրետ խախտումների հիշատակումներով, այլ որպես ընտրությունների ընթացքի և դրանց արդյունքների վերաբերյալ ընդհանուր եզրակացությունների արտացոլում: Թեև այստեղ հարկ է նշել գնահատականների որոշակի անհամապատասխանություն. այս խմբի քաղաքական ուժերի մեծ մասը ընտրությունների մասին արտահայտվում էր բացասաբար կամ չեզոք, իսկ դրանց զգալիորեն փոքր մասը, առաջին հերթին` «Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինքը», այդ թվում` նաև դրական:

Լուսաբանման ինտենսիվությամբ երրորդը **անցումային շեմը հաղթահարած, սակայն հաղթողին զիջած քաղաքական ուժերի** խումբն էր («Հայաստան» և «Պատիվ ունեն» դաշինքները): Ընտրությունների ընթացքի և արդյունքների վերաբերյալ նրանց գնահատականները մշտադիտարկման օբյեկտ դարձած բոլոր 11 խմբերից ամենաձայրահեղն էին` 135 բացասական, 27 չեզոք և ոչ մի դրական անդրադարձ: Եվ եթե ամենաինտենսիվ լուսաբանվող խումբը` պետական մարմինների ներկայացուցիչներն իրենց բացասական գնահատականներում հիմնվում էին ընդդիմության կողմնակիցների կատարած ընտրախախտումների վրա (գործատուների ճնշում իրենց աշխատողների վրա, ընտրողների կաշառում), ապա խորհրդարանական նոր ընդդիմությունը շեշտում էր իշխանությունների կողմից վարչական ռեսուրսների օգտագործումը, ողջ քարոզարշավի ընթացքում իրենց կողմնակիցների անօրինական հետապնդումը:

Լրագրողներն ու սոցիալական ցանցերի ակտիվ օգտատերերը հետազոտված յոթ հեռարձակողների եթերում ընտրությունների մասին նույնպես արտահայտվում էին առանց դրական գնահատականների` 38 բացասականի դեպքում: Մակայն լուսաբանման

ինտենսիվությամբ չորրորդ տեղն զբաղեցնող այս խմբի ներկայացուցիչների անդրադարձներում գերակշռում էր ընտրությունների ընթացքի և արդյունքների նկատմամբ չեզոք վերաբերմունքը (121):

Ընտրությունների վերաբերյալ մոտավորապես հավասար քանակությամբ դրական և բացասական կարծիքներ արձանագրվել են «Այլ» խմբում, որի մեջ ընդգրկված էին, մասնավորապես, օտարերկրյա պետությունների պաշտոնյաները և քաղաքական գործիչները: Նրանց հայտարարություններում գերակշռում էին չեզոք գնահատականները՝ 112 (10 դրական և 12 բացասականի դեպքում):

Ընտրություններում հաղթած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը որպես մշտադիտարկման օբյեկտ ընտրված 11 խմբերից միայն վեցերորդն էր՝ հետընտրական ժամանակահատվածի թեմային իր անդրադարձների ինտենսիվությամբ: Այս հանգամանքը, դատելով մի շարք լրատվամիջոցների լրագրողների արձագանքներից, կարող էր պայմանավորված լինել նրանով, որ այս խմբի ներկայացուցիչները բավական հաճախ են հրաժարվել հարցազրույցներ տալ և մասնակցել բանավիճային հաղորդումների: Միևնույն ժամանակ, ի տարբերություն քաղաքական մրցակիցների, մշտադիտարկման այս փուլի թեմային նշանային բնութագրիչներով անդրադարձների ճնշող մեծամասնության դեպքում նրանք դրական են արտահայտվել ընտրությունների ընթացքի և արդյունքների մասին (22՝ ընդդեմ 2 բացասականի):

Հատկանշական են լուսաբանման ինտենսիվությամբ 11-ից յոթերորդ տեղը զբաղեցրած **«Քաղաքացիական հասարակություն/Փորձագիտական հանրություն»** խմբի կողմից նշանային բնութագրիչներով անդրադարձների ցուցանիշները: Եթե Հանրային հեռուստատեսության Առաջին ալիքում ընտրությունների վերաբերյալ նրանց գնահատականները 9 դեպքերում դրական էին և ոչ մի անգամ՝ բացասական, ապա մյուս հինգ հեռարձակողների եթերում հաշվեկշիռն արձանագրվել է հոգուտ բացասական արձագանքների: Մասնավորապես, «Երկիր Մեդիայի» եթերում այս խմբի ներկայացուցիչների կողմից քննադատության 26 դեպք է հնչել, դրական գնահատականների իսպառ բացակայության պարագայում: Այս հանգամանքը վկայում է իրենց եթերում ընտրությունների մասին խոսողներ հրավիրելու հարցում որոշ լրատվամիջոցների միտումնավոր մոտեցման մասին:

Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցների արձագանքները լրատվամիջոցների ուշադրությունը շատ ավելի պակաս զբաղեցին, քան նախորդ ընտրությունների ժամանակ, ընդ որում այս խմբի ներկայացուցիչների գնահատականները կա՛մ դրական էին (12), կա՛մ չեզոք (39): Հետազոտված հեռարձակողները նույնիսկ ավելի քիչ հետաքրքրություն են ցուցաբերել **տեղական դիտորդներ/ մշտադիտարկման խմբերի** նկատմամբ, ընդ որում նրանց դեպքում արձանագրվել է 11 բացասական և ոչ մի դրական գնահատական՝ ընդամենը երկու չեզոքի դիմաց: Լրատվամիջոցների կողմից միջազգային և տեղական դիտորդների հայտարարություններին անդրադարձների այս տարբերությունը բացատրվում է նրանով, որ առաջինները, որպես կանոն, ընդհանուր գնահատականներ էին տալիս ընտրական գործընթացին, իսկ վերջինները կենտրոնանում էին քարոզարշավի և քվեարկության ընթացքում իրենց արձանագրած խախտումների վրա:

ԲԱՎԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆ է ստացվել այն պատկերը, որն արտացոլում է հետազոտված առանձին լրատվամիջոցների հետաքրքրությունը որպես մշտադիտարկման օբյեկտ ընտրված տարբեր խմբերի՝ ընտրություններին արձագանքների նկատմամբ:

Հանրայինի Առաջին ալիքը և Հանրային ռադիոն հիմնականում կողմնորոշվում/առաջնորդվում էին պետական պաշտոնական մարմինների գնահատականներով:

Ա-ԹԻՎԻ-ն առավելագույն և հավասար ուշադրության է արժանացրել այս նույն խմբին և անցումային շեմը չհաղթահարած քաղաքական ուժերին: Վերջին խումբը առաջատարն է դարձել «Արմենիայի» եթերում՝ մի փոքր առաջ անցնելով պետական պաշտոնական մարմիններից:

Երկու ընդդիմադիր ուժերը, որոնք խորհրդարան են անցել, առաջատար էին «Երկիր Մեդիա»-ի եթերում՝ կրկին երկրորդ տեղում թողնելով պետական պաշտոնական մարմիններին:

Խորհրդարան չանցած քաղաքական ուժերը առավելագույն ուշադրության արժանացել են «Շանթի» եթերում, ընդ որում լուսաբանման հաճախությամբ նրանց հաջորդող պետական պաշտոնական մարմինները հետ են մնացել ավելի քան երկուսուկես անգամ (համապատասխանաբար 65 և 25 անդրադարձ):

Ամենից ոչ տիպական ցուցանիշը գրանցել է «Կենտրոն» հեռուստաալիքը, որտեղ ԵՄԱ մշտադիտարկման ամփոփիչ փուլի թեմայով առավել հաճախ էին հեռարձակվում լրագրողների և սոցիալական ցանցերի ակտիվ օգտատերերի արձագանքները: Այստեղ բավական զուսպ է արտացոլվել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության դիրքորոշումը (հետազոտության շրջանակներում այն ընդգրկվել է Հայաստանի նոր գումարման խորհրդարան չմտած քաղաքական ուժերի խմբում), որի հետ ասոցացվում է այս հեռարձակողը: Ինչպես նշվել է մշտադիտարկման նախորդ փուլերի զեկույցներում, ԲՀԿ-ն իր լրատվական ռեսուրսի նկատմամբ վերջին տարիների ընթացքում առաջին անգամ է նման վերաբերմունք դրսևորում, ինչպես նաև առաջին անգամ իր հիմնադրումից ի վեր չի անցել երկրի օրենսդիր մարմին:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ փուլ. 2021թ. ՀՈՒՆԻՍԻ 7-18

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՌԱՐՉԱԿՎՈՂ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ 2021թ. հունիսի 20-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների լուսաբանման մշտադիտարկումը, որն իրականացնում է Երևանի մամուլի ակումբը, ընդգրկում է հայկական համազգային բոլոր 6 հեռուստատեսությունները (Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք, Ա-ԹԻՎԻ, «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ») և Հայաստանի հանրային ռադիոն: Հետազոտությունն անցկացվում է երեք փուլով՝ նախընտրական շրջան (2021թ. մայիսի 31 - հունիսի 6), պաշտոնական նախընտրական քարոզարշավ (2021թ. հունիսի 7-18) և հետընտրական շրջան (2021թ. հունիսի 20-ին ընտրական տեղամասերը փակելու պահից մինչև հուլիսի 4-ը): Սույն հաշվետվության մեջ ներկայացվում են վերոնշյալ փուլերից երկրորդի՝ 2021թ. հունիսի 7-18-ի արդյունքները:

Ինչպես և հետազոտության առաջին փուլի հաշվետվությունում (2021թ. մայիսի 31- հունիսի 6), մշտադիտարկման թիւրը նշում է, որ քաղաքական պայքարի սրությամբ և ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի աննախադեպ քանակով է (26) պայմանավորված այն հանգամանքը, որ ԶԼՄ-ներն ակտիվորեն լուսաբանում էին քարոզարշավը: «Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցության հրաժարվելը նախընտրական քարոզարշավի անցկացումից այդ իմաստով ոչինչ չի փոխել:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԵՐՈՒՄ միտումների համեմատությունը թույլ է տալիս կրկին ընդգծել նախընտրական շրջանում հեռարձակող ԶԼՄ-ների օրենսդրական հստակ կարգավորման կարևորությունը: Հունիսի 7-ից սկսած, երբ ընտրություններին մասնակցող քաղաքական բոլոր ուժերին հավասար պայմանների տրամադրումը դարձավ պարտադիր, հետազոտված հեռուստա- և ռադիոալիքների կողմից լուսաբանումը դարձավ շատ ավելի հավասարակշռված, քան մինչև նախորդող ժամանակահատվածում էր: Սակայն մի շարք քաղաքական ուժերի համար երկար ժամանակով էթերի սահմանափակ հասանելիությունը, ընտրությունների մասին հայտարարումից հետո՝ ներառյալ, հազիվ թե փոխհատուցվի նախընտրական քարոզարշավի 12 օրվա ընթացքում, նույնիսկ եթե այն ապահովի հավասարակշռված լուսաբանում: Ինչպես բազմաթիվ անգամներ, տարիների ընթացքում իր մեդիա հետազոտություններում նշում է Երևանի մամուլի ակումբը, տվյալ հանգամանքը պահանջում է, որ նախընտրական քարոզարշավների լուսաբանման սկզբունքները տարածվեն շատ ավելի երկար ժամանակահատվածի վրա, քան պաշտոնական քարոզչության 12 օրերն են, ինչը տեղի է ունենում արտահերթ ընտրությունների ժամանակ:

ՍՈՒՑՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ընտրությունների նկատմամբ եթերաժամանակի ծավալի առումով ամենամեծ ուշադրությունը համազգային հեռարձակողներից ցուցաբերել են Հայաստանի Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքը և «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունը, իսկ մշտադիտարկման թեմային անդրադարձների հաճախությամբ՝ կրկին Հանրայինի Առաջին ալիքը և «Շանթը»: «Արմենիան» և Ա-ԹԻՎԻ-ն և Հանրային ռադիոն ընտրությունների նկատմամբ ուշադրության ցուցանիշով խիստ հետ են մնացել:

հետազոտված մյուս հեռարձակողներից և մի քանի բացառություններով սահմանափակվել են լրատվական լուսաբանմամբ: Հիշատակված երեք «առաջատարների» կողմից ընտրություններին տրամադրված եթերաժամանակի հանրագումարային ծավալը գրեթե ութ անգամ գերազանցել է երեք նվազագույն ակտիվ հեռարձակողների համապատասխան հանրագումարային ցուցանիշը: Հարկ է նշել, որ հետազոտված բոլոր հինգ մասնավոր հեռարձակողները 2021թ. սկզբում ստացել էին հանրային մուլտիպլեքսի միջոցով հեռարձակվելու արտոնագիր, որը միննույն պայմաններն է ենթադրում: Սակայն հեռարձակման ծրագրերի կազմմանը նրանց մոտեցումները, մասնավորապես, կարևոր քաղաքական իրադարձությունների ժամանակահատվածում, ինչպես ցույց են տալիս ընտրությունների լուսաբանման այս մշտադիտարկման արդյունքները, խիստ տարբերվում են:

Երևանի մամուլի ակումբի նախորդ համանման հետազոտությունների արդյունքների հետ համեմատությամբ, հարկ է ընդգծել «Կենտրոն» հեռուստաընկերության կողմից ընտրությունների լուսաբանման աշխատանքներում որոշակի փոփոխությունը: Եթե նախորդ տարիներին լուսաբանման ինտենսիվությամբ այն մրցակցում էր «Երկիր Մեդիայի» հետ, ապա այս անգամ համեմատաբար փոքր ուշադրություն է ցուցաբերել քարոզարշավին և այս հարցում հետ է մնացել ինչպես Հանրային Առաջին ալիքից և «Երկիր Մեդիայից», այնպես էլ «Շանթից»: Բացի այդ, եթե նախկինում «Կենտրոնի» ուշադրության կիզակետում ընդգծված կերպով եղել է այս ալիքի հետ նույնականացվող «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (ԲՀԿ), ապա այժմ, նախընտրական քարոզչության ողջ ժամանակահատվածի ցուցանիշներով, նրանից առաջ են անցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը և «Հայաստան» դաշինքը: Հնարավոր է, որ գոյություն ունի որոշակի կապ այս հանգամանքի և ԲՀԿ-ի համեմատաբար համեստ քարոզարշավի միջև, որը 2007-ից մինչև 2018թթ. անփոփոխ անցել է ՀՀ Ազգային ժողով և թվով երկրորդ խմբակցությունն է ունեցել, իսկ այս անգամ նույնիսկ չի հաղթահարել հինգտոկոսանոց անցումային շեմը:

ՀԱՆՐԱՔԿԵՆԵՐԻ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԲՆՈՒՅԹՆ ընդհանուր առմամբ արտացոլում է երկրի քաղաքական և մեդիաալոնություններում առկա որոշակի միտումները: 2012-2018թթ. հատուկ ակտիվություն ցուցաբերում էին այն մասնավոր հեռուստաալիքները, որոնք ասոցացվում են կոնկրետ քաղաքական կուսակցությունների հետ, առաջին հերթին, ինչպես նշվեց վերևում, «Կենտրոնը» և «Երկիր Մեդիան» (որը կապակցված է Հայ Յեղափոխական Դաշնակցության հետ): Բացառություն էին կազմել միայն 2013թ. նախագահական ընտրությունները, երբ ԲՀԿ-ն և ՀՅԴ-ն չառաջադրեցին իրենց թեկնածուներին: Սակայն 2021թ. քարոզարշավում, ինչպես երևում է մշտադիտարկման աղյուսակներից, այս երկու հեռուստաալիքների ներգրավվածությունը տարբեր է եղել, ինչը կարելի է բացատրել կառավարող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը հիմնական մարտահրավերը նետած «Հայաստան» դաշինքին ՀՅԴ-ի միանալով, այն դեպքում, որ ԲՀԿ-ն նախկին հավակնությունները հանդես չի բերել:

Որոշակի միտումներ կարելի է գտնել նաև Հանրային հեռուստատեսության վերջին տարիների վարքագծի մեջ: 2012թ. խորհրդարանական և 2013թ. նախագահական ընտրություններում Հանրայինը, ի տարբերություն նախորդ տարիների, քարոզարշավի լուսաբանման հարցում աննախադեպ պասիվություն է ցուցաբերել: Մեդիա փորձագետներն այս երևույթը բացատրեցին այն հանգամանքով, որ հայաստանյան քաղաքական վերնախավը նախընտրական քարոզչության հիմնական ծանրությունը տեղափոխել էր մասնավոր հեռուստաալիքների վրա: Նույնիսկ 2015թ. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի լուսաբանման հարցում Հանրայինի Առաջին ալիքը նախաձեռնությունը զիջել էր նույն «Կենտրոնին» և «Երկիր Մեդիային»: Սակայն 2018թ. «թավշյա» հեղափոխությունից հետո հանրային հեռուստահեռարձակողը վերադարձրեց

ընտրությունների լուսաբանման և ընտրազանգվածին տեղեկացնելու իր առաջնային դիրքը՝ հեռարձակող ՁԼՄ-ների ցանկում ցուցաբերելով վերջին երկու արտահերթ ընտրությունների քարոզարշավների (2018թ. դեկտեմբեր և 2021թ. հունիս) լուսաբանման նկատմամբ ամենամեծ ուշադրությունը: Այն նախաձեռնեց, այդ թվում, նախընտրական բանավեճերի մշակույթի ներդրման լուրջ ջանքեր: Միևնույն ժամանակ, Հանրային ռադիոն սույն մշտադիտարկման առարկա դարձած մյուս բոլոր ՁԼՄ-ներին զիջել է ինչպես ընտրությունների թեմային անդրադարձների հաճախության ցուցանիշով, այնպես էլ՝ հատկացրած եթերաժամանակով:

Համազգային մյուս հեռարձակողներից «Շանթը», դատելով մշտադիտարկման արդյունքներից, ձգտում է հավասարակշռված արձագանք տալ իր լսարանի թե՛ քաղաքական, թե՛ այլ բովանդակության նկատմամբ հետաքրքրություններին: «Արմենիան» և Ա-ԹԻՎԻ-ն նույնիսկ նախընտրական քարոզարշավների ժամանակ առաջնահերթությունը տալիս են լսարանի այլընտրանքային հետաքրքրություններին, մասնավորապես, առաջինը ձեռք է բերել բացառիկ իրավունք ցուցադրելու ֆուտբոլի Եվրոպայի առաջնության խաղերը, որոնք ժամկետով համընկան Հայաստանում նախընտրական քարոզարշավի հետ:

ԱՅՆ ԵԹԵՐԱԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ, որը 2021թ. հունիսի 7-18-ը հետազոտված հեռարձակողների կողմից հատկացվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը և «Հայաստան» դաշինքին, առաջվա պես էականորեն գերազանցել է մյուս 23 քաղաքական ուժերի ցուցանիշները: Սակայն այս տարբերությունը, ի հակադրություն պաշտոնական քարոզարշավին նախորդող ժամանակաշրջանի, արդեն թույլ չի տալիս խոսել այն մասին, որ նախընտրական մրցապայքարի մասնակիցներից որևէ մեկը զրկված է եղել ուշադրությունից: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը մշտադիտարկման առարկա հանդիսացող բոլոր յոթ հեռուստա- և ռադիոալիքների եթերում դարձել է առաջատար իրեն կատարված անդրադարձների հաճախությամբ: Եվ միայն «Երկիր Մեդիա» հեռուստաալիքում «Հայաստան» դաշինքին զիջել է եթերաժամանակի ծավալով: Սակայն, սա հազիվ թե հիմք է տալիս խոսելու այն մասին, որ ինտենսիվ լուսաբանման հաշվին «Քաղաքացիական պայմանագիրը» հիմնական մրցակիցների նկատմամբ առավելություն է ստացել:

Դեպքերի կեսից ավելիում (270՝ 492-ից) իշխող քաղաքական ուժին անդրադարձները ուղեկցվում էին բացասական գնահատականներով և միայն երեք նյութում է այն լուսաբանվել դրական համատեքստում: Ընդ որում, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը նշանային բնութագրիչներով անդրադարձների աննախադեպ ոչ նպաստավոր հարաբերակցություն արձանագրվել է հետազոտված բոլոր ՁԼՄ-ների եթերում: Առանձին վերցրած հեռարձակողներից՝ այս կուսակցության համար ամենից ոչ նպաստավոր հարաբերակցությունը եղել է «Երկիր Մեդիայի» եթերում (0 դրական՝ 80 բացասականի դիմաց), ամենանպաստավորը՝ Հանրային ռադիոյում (0՝ 5): Ընդ որում, հարկ է նշել, որ Հանրային ռադիոյի հաղորդումներում ընդհանրապես արձանագրվել է ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերին նշանային բնութագրիչներով անդրադարձների ամենացածր թիվը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը նշանային բնութագրիչներով անդրադարձների այս կարգի ուղղվածության համեմատությունը 2021թ. հունիսի 20-ի քվեարկության արդյունքներով նրա համոզիչ հաղթանակի հետ թույլ է տալիս լուրջ կասկածի տակ առնել ազդեցիկ տեղեկատվական արշավի արդյունավետությունը, որին կառավարող քաղաքական ուժը արժանացավ ոչ միայն նախընտրական շրջանում, այլ նաև դրան նախորդող ամիսներին: Ավելին, չի կարելի բացառել, որ դա է հանգեցրել սպասվածից հակառակ արդյունքի: Այստեղ հարկ է նշել, որ «Քաղաքացիական պայմանագիր» նախընտրական քարոզարշավին հատուկ էր ոչ պակաս ազդեցիկությունը, սակայն դա մշտադիտարկման քանակական տվյալների

վրա չանդրադարձավ այն բանի հետևանքով, որ այս կուսակցության հասցեին բացասական արտահայտությունները բարձրաձայնվում էին քարոզարշավում ներգրավված շատ ավելի մեծ թվով սուբյեկտների կողմից:

Նշանային բնութագրիչներով անդրադարձների պարունակության ինտենսիվությամբ երկրորդը ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ղեկավարած «Հայաստան» դաշինքն է, ինչը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ այս քաղաքական ուժի առձակատման վրա ընթացիկ ընտրարշավի քարոզչական բաղադրիչի շեշտադրման ևս մեկ հաստատումը դարձավ: «Հայաստան» դաշինքին նշանային բնութագրիչներով անդրադարձները կազմել են դրանց ընդհանուր թվի մոտավորապես 40%-ը (107՝ 272-ից), սակայն այս քաղաքական ուժի հանրագումարային հաշվեկշիռը նշանակալիորեն ավելի նպաստավոր է (48 դրական՝ 59 բացասականի դիմաց), քան «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության: Ընդ որում, այս դաշինքի ամենանպաստավոր հաշվեկշիռը արձանագրվել է «Երկիր Մեդիա» հեռուստաալիքում (34՝ 5), իսկ ամենից ոչ նպաստավորը՝ Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի եթերում (5՝ 31): Ի դեպ, հետազոտված մյուս ՋԼՄ-ների համեմատությամբ, հանրային երկու հեռարձակողները «Հայաստան» դաշինքին տրամադրած եթերաժամանակով ամենաքիչ ուշադրությունն են հատկացրել: Հանրայինի Առաջին ալիքում ընտրությունների բոլոր մասնակիցներից այս քաղաքական ուժը համապատասխան ցուցանիշով գրավել է վեցերորդ, Հանրային ռադիոյում՝ չորրորդ տեղը:

Չեզոք լուսաբանումից պատճառաբանված շեղումները արձանագրվել են նաև «Պատիվ ունեմ» դաշինքի դեպքում, որը նույնականացվում է ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի հետ (հետազոտված բոլոր յոթ ՋԼՄ-ների անդրադարձների հանրագումարով՝ 2 դրական և 47 բացասական) և «Հայ ազգային կոնգրես» կուսակցության դեպքում, որը գլխավորում է ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը (համապատասխանաբար, 4 և 32 անդրադարձ): Այս հանգամանքը ապացուցում է, որ հիմնավորված է 2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների տարածված բնութագիրը՝ որպես «նախկինների և ներկաների» պայքարի, ինչպես նաև այն, որ ամբողջ ընտրարշավի թեմատիկան կենտրոնացված է Հայաստանի նորագույն պատմության (վերջին 30 տարվա) գնահատականների վրա: Ընդ որում, ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերի միջև բանավեճերի կենտրոնում են եղել Լեոնային Ղարաբաղի և երկրի անվտանգության հիմնախնդիրները, ինչը պայմանավորել է տեղեկատվական առձակատման առանձնահատուկ սրությունը և զգայական բնույթը:

Նշանային բնութագրիչների որոշակի աստիճան առկա է եղել նաև «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը անդրադարձներում (7 դրական և 3 բացասական): Ընդ որում, այս կուսակցությանը բոլոր դրական անդրադարձներն արձանագրվել են «Կենտրոնի» եթերում: Իսկ մյուս քաղաքական ուժերը լուսաբանվել են հիմնականում չեզոք կերպով: Այլ խոսքով, դրանք չեն դիտարկվել որպես առձակատման սուբյեկտներ՝ անկախ նրանց մոտ քարոզարշավի հիմնական թեմայի վերաբերյալ հստակ արտահայտված դիրքորոշումների առկայությունից:

Կառավարող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և նրա ղեկավարի՝ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի հասցեին քննադատության և մեղադրանքների հիմնական մասը հետազոտված ՋԼՄ-ներում առնչվում էր 44-օրյա դարաբաղյան պատերազմում պարտության համար Հայաստանի ղեկավարության պատասխանատվությանը, Թուրքիայի և Ադրբեյջանի շահերին ենթադրաբար ծառայելուն, ոչ կոմպետենտությանը, ներքին և արտաքին քաղաքականության մեջ ձախողումներին: Այս քաղաքական ուժի գործունեության վերաբերյալ ընդգծված դրական վերաբերմունք չի արձանագրվել հետազոտված լրատվամիջոցներից և ոչ

մեկում: «Հայաստան», «Պատիվ ունեմ» դաշինքների և «Հայ ազգային կոնգրես» կուսակցության հետ կապված բացասական ենթատեքստը ձևավորվում էր պետությունը ղեկավարելու ժամանակահատվածներում նրանց առաջնորդների գործունեության գնահատականների հաշվին: Միննույն ժամանակ, առաջին երկու քաղաքական ուժերը մեղադրվում էին լայնամասշտաբ կոռուպցիայի մեջ, ինչը հանգեցրեց, այդ թվում, բանակի թուլացմանը և դարաբաղյան կարգավորման բանակցությունները փակուղի մտցնելուն: Հատկանշական է, որ դրական գնահատականները, որոնք, որպես կանոն, նրանց ներկայացուցիչներն իրենք էին իրենց տալիս, վերաբերվում էին նույն ոլորտներին, որոնք քննադատում էին ընդդիմախոսները՝ արդյունավետ կառավարում, դիվանագիտական հաջողություններ: Ինչ վերաբերում է Հայ ազգային կոնգրեսին և Լևոն Տեր-Պետրոսյանին, ապա նրանց մեղադրում էին, մասնավորապես, ընտրությունները կեղծելու ավանդույթների և քրեաօլիգարխիկ համակարգի հիմքերի հաստատման մեջ: Հատկանշական է, որ այլընտրանքային քաղաքական ուժերի ներկայացուցիչների մի շարք հայտարարություններ պարունակում էին միաժամանակ մեղադրանքներ ինչպես գործող, այնպես էլ՝ նախորդ բոլոր ղեկավարների հասցեին, ներառյալ՝ քարոզարշավի ընթացքում ատելության մթնոլորտ հրահրելու մեջ, բարձրաձայնվեց նաև ընտրություններում նրանց մասնակցության անընդունելիության գաղափարը:

Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ դեպքերի ճնշող մեծամասնության մեջ նշանային բնութագրիչներով լուսաբանումը ձևավորվում էր գրեթե բացառապես նախընտրական արշավի անմիջական մասնակիցների կողմից հայտարարությունների տարածման միջոցով. լրագրողները, որպես կանոն, խուսափում էին գնահատողական դատողություններից:

ԵՄԱ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ չի նախատեսել «լռության օրը» (2021թ. հունիսի 19) և քվեարկության օրը օրենսդրական սահմանափակումների խախտումների քանակական ուսումնասիրություն: Մասնավորապես, 2021թ. հունիսի 20-ի ժամը 20.00-ին տեղամասերի փակումից 44 ժամ առաջ ՀՀ ընտրական օրենսգիրքն արգելում է քարոզչության ցանկացած ձև: Մինչդեռ, այս ամբողջ ժամանակահատվածը լեցուն էր պատգամավորության թեկնածուների, քաղաքական գործիչների, լրագրողների և այլոց մասնակցությամբ այնպիսի բազմաթիվ դրվագներով, որոնք իրավամբ կարող էին քարոզչություն համարվել: Այս դրվագներից մի քանիսը հայտնվել են նաև հետազոտված հեռարձակողների եթերում: Սակայն, նրանցից որևէ մեկի նկատմամբ որևէ միջոց չի ձեռնարկվել այն մարմինների կողմից, որոնք կոչված են ապահովելու ընտրական օրենսդրության կիրառումը: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ, հաշվի առնելով հաղորդակցական միջավայրի էական փոփոխությունը, «լռության օրվա» կանոնները կարող են պահպանվել միայն այն դեպքում, եթե ընտրական գործընթացի բոլոր մասնակիցները գիտակցում են դրանց կարևորությունը և կամավոր հետևում դրանց: Այս պայմանների բացակայության դեպքում համապատասխան օրենսդրական կարգավորման պահպանումը կորցնում է իր իմաստը, ավելին, դրա պարբերական անտեսումը նպաստում է իրավական նիհիլիզմի զարգացմանը այնպիսի կարևոր հասարակական-քաղաքական ինստիտուտի պայմաններում, ինչպիսին են ընտրությունները:

ՈՐՊԵՏ ԱՅՍ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԼՈՒՄԱԲԱՆՄԱՆ դրական միտումներ հետազոտության և՛ սկզբում, և՛ այս հաշվետվության ընդգրկման 12 օրերի ընթացքում, ԵՄԱ մշտադիտարկման թիմն արձանագրել է հետևյալը.

- Հետազոտված ԶԼՄ-ները, լուսաբանելով նախընտրական միջոցառումները և հեռարձակելով քաղաքական գործիչների և այլոց արտահայտությունները, որպես կանոն, ձգտում էին, եթե դա ուղիղ եթեր չէր, փոխանցել այդ արտահայտությունների հիմնական

միտքը՝ հնարավորինս բացառելով կոպիտ վիրավորանքները, հայիտյանքը, ասելության լեզուն:

- Հունիսի 7-ից սկսած՝ կտրուկ նվազել են առանց կուսակցական պատկանելությունը նշելու «Քաղաքացիական պայմանագրի» այն ներկայացուցիչներին անդրադարձները, որոնք տարբեր դեկավար պաշտոններ են զբաղեցնում: Սա ենթադրաբար վկայում է այն մասին, որ հետազոտված ՁԼՄ-ները հրաժարվել են իշխող քաղաքական ուժի օգտին կամ ի վնաս նրա թաքնված քարոզչությունն անելուց:
- Հետազոտված հեռարձակողների նյութերի բովանդակությունը ծանրակշիռ հիմքեր չի տալիս խոսելու այս քարոզարշավի ընթացքում մեղիառլորտի վրա ազդեցություն գործելու համար վարչական ռեսուրսի օգտագործման մասին: Ընդ որում, ընտրությունների տեղական դիտորդները բերում էին զանազան նախընտրական միջոցառումների կազմակերպման ժամանակ վարչական ռեսուրսի օգտագործման բազմաթիվ վկայություններ:
- Նախընտրական բանավեճերը, որոնք կազմակերպում են ինչպես Հանրային հեռուստատեսությունը, այնպես էլ մասնավոր հեռուստաալիքները, չնայած առանձին միջադեպերի առկայությանը, անցնում էին էականորեն ավելի կառուցողական մթնոլորտում և քաղաքական մշակույթի որոշակի սկզբունքներին հետևելու շատ ավելի մեծ պատրաստակամությամբ, քան նախընտրական քարոզչության շրջանակներում կազմակերպվող հանրային միջոցառումները:
- Հետազոտված հեռարձակողների հաղորդումներում գրեթե բացակայում էին այն դրվագները, որտեղ երեխաները օգտագործվում էին նախընտրական քարոզչության նպատակներով: Թեև հանրության հետ հանդիպումներում, հատկապես Հայաստանի մարզերում, դատելով առցանց ՁԼՄ-ներում և սոցիալական ցանցերում տարածված տեսասյուժեներից, նախընտրական պայքարի մասնակիցները, մասնավորապես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, բավական հաճախ էին դիմում նման մեթոդների:

ՆՇՎԱԾ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՄԱ մշտադիտարկման թիմին թույլ են տալիս կատարել այն եզրակացությունը, որ նախընտրական քարոզարշավի մեղիա բաղադրիչը, առաջին հերթին՝ համազգային հեռարձակողների գործունեությունը, ավելի շատ էր համապատասխանում ՀՀ օրենսդրությանը և միջազգային չափանիշներին, քան նախընտրական քարոզարշավն՝ ընդհանուր առմամբ:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՋԼՄ-ՆԵՐԻ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Առաջին փուլ. 2021թ. ՄԱՅԻՄԻ 31 - ՀՈՒՆԻՄԻ 6

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՎՈՂ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ 2021թ. հունիսի 20-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների լուսաբանման մշտադիտարկումը, որն իրականացնում է Երևանի մամուլի ակումբը, ընդգրկում է հայկական համազգային բոլոր 6 հեռուստատվիքները (Հայաստանի հանրային հեռուստառնկերության Առաջին ալիք, Ա-ԹԻՎԻ, «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ») և Հայաստանի հանրային ռադիոն: Հետազոտությունն անցկացվում է երեք փուլով՝ նախընտրական շրջան (2021թ. մայիսի 31 - հունիսի 6), պաշտոնական նախընտրական քարոզարշավ (2021թ. հունիսի 7-18) և հետընտրական շրջան (2021թ. հունիսի 20-ին ընտրական տեղամասերը փակելու պահից մինչև հունիսի 27-ը): Սույն հաշվետվությունը ներկայացնում է վերոնշյալ փուլերից առաջինի արդյունքները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒԹՅԱՄԲ և ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի աննախադեպ քանակով է (26) պայմանավորված այն հանգամանքը, որ ՋԼՄ-ները նախընտրական քարոզչությունն ակտիվորեն լուսաբանում էին դեռևս պաշտոնական քարոզարշավի մեկնարկից շատ առաջ և մասնավորապես՝ դրան նախորդող շաբաթվա ընթացքում, երբ որոշվեցին խորհրդարանի տեղերի համար մրցող բոլոր թեկնածուները: Ավանդաբար, ինչպես արձանագրում են, այդ թվում՝ ԵՄԱ նախորդ տարիների համանման հետազոտությունները, ընտրությունների նկատմամբ ամենամեծ ուշադրությունը համազգային հեռարձակողներից ցուցաբերում են հանրային հեռուստա- և ռադիո ալիքները, ինչպես նաև «Երկիր Մեդիա», «Կենտրոն» և «Շանթ» մասնավոր հեռուստառնկերությունները: Սակայն անգամ այս հինգ լրատվամիջոցների ակտիվության ֆոնին խիստ ընդգծվում է «Երկիր Մեդիան», որը երեկոյան պրայմ թայմի ժամանակ ընտրությունների թեմային հատկացված եթերաժամանակով գերազանցել է մյուս բոլոր հետազոտված հեռարձակողներին՝ միասին վերցրած: Այս ցուցանիշով «Երկիր Մեդիային» հետևում են Հանրային հեռուստառնկերության Առաջին ալիքը և «Շանթը»: Վերը նշված ՋԼՄ-ների հնգյակը նախընտրական քարոզարշավը լուսաբանում է ինչպես նորությունների թողարկումներով, այնպես էլ՝ բանավիճային հաղորդումներում: Մյուս երկու համազգային հեռարձակողները՝ «Արմենիա» և «Ա-ԹԻՎԻ», հետազոտության ներկայացվող փուլում սահմանափակվել են ընտրությունների բացառապես լրատվական լուսաբանմամբ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ երկու քաղաքական ուժերի՝ «Հայաստան» դաշինքի և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առնչությամբ, անդրադարձել է ՋԼՄ-ներում նրանց լուսաբանման վրա: Եթերաժամանակի հանրագումարային ծավալով առաջատարը «Հայաստան» դաշինքն է, իսկ անդրադարձների հանրագումարային հաճախությամբ՝ «Քաղաքացիական պայմանագիրը» (125 անդրադարձ): Միևնույն ժամանակ, «Քաղաքացիական պայմանագրի» նախընտրական ցուցակում ընդգրկված պաշտոնատար անձանց լուսաբանումը առանց նրանց կուսակցական պատկանելությունը նշելու նույնիսկ ավելի հաճախ էր (181 անդրադարձ), քան դրա նշումով: Կարելի է ենթադրել, որ տվյալ հանգամանքը փոխհատուցում է այն, որ այս կուսակցությունը հանրագումարային եթերաժամանակով հետ է մնում «Հայաստան» դաշինքից (համապատասխանաբար՝ 21,663.5 և 41,895.5 վայրկյան): Մյուս

կուսակցությունները/դաշինքները հետազոտված բոլոր յոթ ՁԼՄ-ների հանրագումարային ցուցանիշներով էապես հետ են մնում:

Հենց երկու առաջատարների և ընտրապայքարի մասնակից մյուս 24-ի միջև խզումը թույլ չի տալիս խոսել պաշտոնական քարոզչությանը նախորդող շրջանում այս քարոզարշավի հավասարակշռված լուսաբանման մասին:

«Հայաստան» դաշինքը և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն են արժանացել յոթ հետազոտված հեռարձակողներից չորսի ամենամեծ ուշադրությանը («Երկիր Մեդիա», «Շանթ», «Արմենիա» և «Ա-ԹԻՎԻ»): Նրանց միջև հարաբերական հավասարություն է արձանագրվել «Շանթ» հեռուստաընկերության եթերում:

Հեռարձակողների մեծ մասի դեպքում այս կամ այն քաղաքական ուժն ընտրապայքարի մյուս մասնակիցների համեմատությամբ ստացել է լուսաբանման էական առավելություն: Մասնավորապես, «Երկիր Մեդիայի» հետազոտված հաղորդումներում ընտրությունների թեմային նվիրված եթերաժամանակի գրեթե երեք քառորդը հատկացված է եղել «Հայաստան» դաշինքին: «Կենտրոն» հեռուստաալիքի եթերաժամանակի կեսից ավելին բաժին է հասել «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը:

Հետազոտված բոլոր յոթ ՁԼՄ-ների կողմից հատկացված ուշադրության հանրագումարային ցուցանիշներով, ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը կարելի է բաժանել երեք պայմանական խմբի:

Առաջին խմբում հայտնվել են յոթ քաղաքական կուսակցություններ/դաշինքներ, որոնք որոշակի ինտենսիվությամբ լուսաբանվել են տարբեր հեռարձակողների ինչպես լրատվական, այնպես էլ բանավիճային հաղորդումներում: «Հայաստան» դաշինքից և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից բացի, որոնց մասին խոսվեց վերևում, դրանք են՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, «Պատիվ ունեմ» դաշինքը, «5165 ազգային պահպանողական շարժում», «Լուսավոր Հայաստան» և «Արդար Հայաստան» կուսակցությունները:

Եվս 12 քաղաքական ուժ (երկրորդ խումբ) արժանացել է քիչ թե շատ բովանդակային լուսաբանման, ինչը լսարանին թույլ կտար նրանց մասին ստանալ նվազագույն տեղեկություններ: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ առաջին և երկրորդ խմբերի միջև սահմանը որոշ չափով պայմանական է, քանի որ, օրինակ, մշտադիտարկման տվյալ փուլում այս կամ այն քաղաքական ուժի ներկայացուցչի հետ քիչ թե շատ ծավալուն հարցազրույցը կարող էր կուսակցությանը/դաշինքին եթերաժամանակի ծավալով ավելի բարձր տեղ ապահովել: Այս ցուցանիշով, ինչպես նաև անդրադարձների հաճախությամբ, անհասանելի առաջատարները մնացել են միայն «Հայաստան» դաշինքը և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը:

Մյուս յոթ քաղաքական ուժերը (երրորդ խումբ) հակիրճ և հավասարապես հիշատակվում էին բացառապես ընտրություններին իրենց մասնակցության հետ կապված ձևական առիթներով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՔԱՐՈՋԱՐՇԱՎԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ (12 օր) լինելով պայմանավորված, երբ օրենսդրությամբ սահմանվում է հանրային մուլտիպլեքսում ընդգրկված վերգետնյա հեռարձակողների կողմից ընտրությունների բոլոր մասնակիցներին լուսաբանման հավասար հնարավորությունների տրամադրումը, նմանատիպ կարգավորման բացակայությունը նախորդող ժամանակահատվածում հանգեցնում է քաղաքական ուժերի նկատմամբ ուշադրության էական անհամամասնության: Օրենսդրության այս բացն առավել սրությամբ դրսևորվում է արտահերթ

ընտրությունների ժամանակ, որոնք անցկացվում են շատ ավելի սեղմ ժամկետներում, քան հերթական ընտրություններն են: Այս հանգամանքը բազմիցս նշվել է դիտորդների կողմից, մասնավորապես, Երևանի մամուլի ակումբի մեդիա հետազոտություններում: Մի շարք քաղաքական ուժերի համար երկար ժամանակով եթերի սահմանափակ հասանելիությունը, ներառյալ ընտրությունների մասին հայտարարումից հետո, հազիվ թե հնարավոր լինի փոխհատուցել նախընտրական քարոզարշավի 12 օրվա ընթացքում, նույնիսկ եթե այդ ժամանակահատվածում ապահովված լինի հավասարակշռված լուսաբանում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՒՐ ԱՌՃԱԿԱՏՈՒՄ այս ընտրությունների նախօրեին, ինչի պատճառը երկրում ծայրահեղ լարված մթնոլորտն է, բացի ինտենսիվ լուսաբանումից, պայմանավորում էր նաև կուսակցություններին և դաշինքներին նշանային բնութագրիչներով անդրադարձների առավել մեծ բաժին՝ 20%-ից ավելի, որում բացասական բովանդակությունը էականորեն գերազանցում է դրականին: Ընդ որում, սա տեղի է ունեցել հիմնականում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և «Հայաստան» դաշինքի լուսաբանման հաշվին:

Մեդադրանքների և քննադատության գլխավոր թիրախը դարձել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը: Մշտադիտարկման ներկայացվող փուլում հետազոտված հեռարձակողների եթերում նրա հասցեին հնչել է արձանագրված բոլոր 77 բացասական անդրադարձներից 66-ը: Սա կազմել է կառավարող քաղաքական ուժի լուսաբանման դրվագների կեսից ավելին: Մեդադրանքները և քննադատությունը վերաբերում էին հիմնականում 44-օրյա տանուլ տված պատերազմում երկրի ղեկավարության դերին, երեք տարվա կառավարման այլ ձախողումներին, ընդդիմախոսների վերաբերյալ ագրեսիվ բառապաշարի օգտագործմանը, ինչպես նաև ընտրությունների կազմակերպման հարցերին:

«Հայաստան» դաշինքն արժանացել է 8 դրական և 9 բացասական անդրադարձների: Դրականը ձևավորվել է գլխավորապես Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի անցյալ և, ընտրություններում հաղթելու դեպքում, հնարավոր ձեռքբերումների մասին հայտարարությունների հաշվին: Իսկ բացասականը եղել է նրա ղեկավարման շրջանին և ներկա քաղաքական կյանքում դերակատարմանը տրված հակառակ գնահատականների հաշվին:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և «Հայաստան» դաշինքի՝ նշանային բնութագրիչների տեսանկյունից առավել բնեռացված լուսաբանմամբ աչքի է ընկել «Երկիր Մեդիան»․ առաջինն արժանացել է 40 բացասական և զրո դրական անդրադարձի, երկրորդը՝ 6 դրական և զրո բացասական:

Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ճնշող մեծամասնությունն արժանացել է բացառապես չեզոք լուսաբանման: Միայն մեկական նշանային բնութագրիչով (բացասական) անդրադարձ է արձանագրվել «Հայ ազգային կոնգրես» կուսակցության և «Պատիվ ունեմ» դաշինքի հասցեին, որոնք կապակցվում են Հայաստանի առաջին և երրորդ նախագահներ Լևոն Տեր-Պետրոսյանի և Սերժ Սարգսյանի հետ: Եվս երկու դրական անդրադարձ ունի «Մեր տունը Հայաստանն է» կուսակցությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՁԼՄ-ներում 2021թ. հունիսի 20-ի ՀՀ Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների լուսաբանման մշտադիտարկումն անցկացրել է Երևանի մամուլի ակումբը՝ IMS (International Media Support) կազմակերպության աջակցությամբ իրականացվող «Հայաստանյան ՁԼՄ-ները և ընտրությունները» ծրագրի շրջանակներում:

Մշտադիտարկումն անցկացվել է երեք փուլով.

- **առաջին փուլ**՝ 2021թ. մայիսի 31 - հունիսի 6 (նախընտրական շրջան),
- **երկրորդ փուլ**՝ 2021թ. հունիսի 7-18 (նախընտրական քարոզչության ժամանակահատված),
- **երրորդ փուլ**՝ 2021թ. հունիսի 20 (20.00 մինչև 02.00) - հուլիսի 4 (հետընտրական գործընթացներ):

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԷՒՆ ստացված քանակական և որակական տվյալների վերլուծության միջոցով պարզել և սահմանել.

- 2021թ. հունիսի 20-ի ՀՀ Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների նկատմամբ Հայաստանի ՁԼՄ-ների ուշադրության աստիճանը,
- արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի տարբեր դիրքորոշումների ներկայացման հավասարակշռվածության աստիճանը,
- որքան ազատ և անկողմնակալ են ՁԼՄ-ները ընտրազանգվածին տեղեկություններ տրամադրել համապետական ընտրական ցուցակներով ՀՀ ԱԺ ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների/դաշինքների մասին, ապահովել վերջինների մուտքը երեք՝ իրենց հայացքների, կարծիքների արտահայտման համար՝ դրանով իսկ նպաստելով ընտրողների կողմից ինքնուրույն և գիտակցված ընտրության կատարմանը,
- որքանով են լրատվամիջոցները հետևել նախընտրական քարոզարշավի լուսաբանումը կարգավորող օրենսդրության դրույթներին,
- որքան ակտիվ են ՁԼՄ-ները անդրադարձել հետընտրական իրավիճակին և արտացոլել ընտրական գործընթացի գնահատականների ներկայակեր:

Մշտադիտարկման վերոթվարկյալ խնդիրների իրականացման համար կիրառվել են հետազոտման քանակական և որակա-քանակական մեթոդները: Քանակական մեթոդները ներառում էին հետարձակվող բովանդակության միավորների և ծավալների զուտ թվաբանական հաշվարկները: Որակա-քանակական մեթոդները հիմնվում էին բովանդակության այն միավորների հաշվարկի վրա, որոնք մշտադիտարկման թիմի կողմից որոշակի վերլուծության են ենթարկվել:

Մշտադիտարկումն ընդգրկել է 7 հեռարձակող ՁԼՄ.

- *համազգային վերգետնյա հեռուստաալիքներ՝* Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք, Ա-ԹԻՎԻ, «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», և «Շանթ»,
- **Հայաստանի հանրային ռադիո:**

Վերոնշյալ ալիքներում հետագոտման են ենթարկվել երեկոյան պրայմ-թայմին (18.00-00.00) հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը, լրատվական-վերլուծական հաղորդումները և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Մշտադիտարկման չեն ենթարկվել առևտրային/սոցիալական գովազդի/հայտարարությունների ներծրագրային բլոկները, ինչպես նաև՝ վազող տողը:

Մշտադիտարկման առարկա են դարձել.

- *առաջին փուլում* (նախընտրական շրջան՝ 2021թ. մայիսի 31 - հունիսի 6)՝ բոլոր այն նյութերը, որոնցում անդրադարձ կար 2021թ. հունիսի 20-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների հավանական/գրանցված մասնակիցներին,
- *երկրորդ փուլում* (նախընտրական քարոզչության ժամանակահատված՝ 2021թ. հունիսի 7-18)՝ բոլոր այն նյութերը, որոնցում անդրադարձ կար 2021թ. հունիսի 20-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին,
- *երրորդ փուլում* (հետընտրական գործընթացներ՝ 2021թ. հունիսի 20 (20.00 մինչև 02.00), հունիսի 21 - հուլիսի 4)՝ բոլոր այն նյութերը, որոնցում անդրադարձ կար 2021թ. հունիսի 20-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների արդյունքների, հայաստանյան հասարակության և միջազգային հանրության տարբեր խմբերի կողմից դրանց և ընդհանրապես հետընտրական գործընթացներին տրված գնահատականներին:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. Հետագոտության հիմնական միավորը **հեռուստա-** և **ռադիոնյութն** էր:

Հեռուստա- և ռադիոնյութ ասելով հասկանում ենք.

Եթերի՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ առանձնացված միավորը, այսինքն՝

- լրատվական ծրագրի առանձին սյուժեն,
- հաղորդավարական տեքստով ընթերցվող առանձին տեղեկատվությունը,
- հաղորդման՝ թեմատիկորեն, կառուցվածքով և ձևավորմամբ (միջարկում, բլյում և այլն) առանձնացված մասը (բաժինը, սյուժեն), որն անդրադառնում է տարբեր թեմաների/խնդիրների,

- սյուժեների ներծրագրային ծանուցումները (անոնսները) դիտարկվել են իբրև այն նյութի մաս, որին վերաբերում են,
- սյուժեին (ռեպորտաժին և այլն) նախորդող հաղորդավարական տեքստը դիտարկվել է իբրև այդ սյուժեի (ռեպորտաժի և այլն) մաս:

Ընդամին.

- **Լրատվական/լրատվական-վերլուծական ծրագրերը** բաժանվել են սյուժեների, որոնցից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ,

- **Հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները** դիտարկվել են հետևյալ կերպ.

1. Եթե հաղորդումը նվիրված էր առանձին թեմայի, ապա այն դիտարկվել է որպես մեկ ինքնուրույն նյութ,

2. Եթե հաղորդումը կառուցված էր խճանկարային սկզբունքով, այն է՝ բաժանված էր ինքնուրույն թեմատիկ բաժինների, ապա այդ բաժիններից յուրաքանչյուրը դիտարկվել է որպես առանձին ինքնուրույն նյութ:

II. Մշտադիտարկողներն օրական արձանագրում էին հետազոտվող եթերի տևողությունը՝ 18.00-00.00-ին հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը, լրատվական-վերլուծական հաղորդումները և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները: Այն հաղորդումները, որոնք սկսվում էին, սակայն չէին ավարտվում ժամը **18.00**-ին, չեն դիտարկվել, մշտադիտարկումն սկսվել է տվյալ հաղորդման ավարտից հետո: Այն հաղորդումները, որոնք սկսվում էին, սակայն չէին ավարտվում ժամը **00.00**-ին, դիտարկվել են ամբողջությամբ, մինչև դրանց ավարտը:

Մշտադիտարկման **չեն ենթարկվել**.

- նախընտրական քարոզչության բլոկները,
- առևտրային/սոցիալական գովազդը/հայտարարությունները,
- վազող տողը:

III. Մշտադիտարկման ընթացքում **պարզվել և արձանագրվել են**.

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2021թ. ՄԱՅԻՄԻ 31 - ՀՈՒՆԻՄԻ 6

1. Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը, որոնք պարունակել են անդրադարձներ 2021թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների հավանական/գրանցված մասնակիցներին:

2. Մշտադիտարկման թեմային անդրադարձների քանակը և ձևը նյութերում

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը և ձևը, որոնք պարունակել են անդրադարձներ արտահերթ խորհրդարանական ընտրությունների հավանական/գրանցված մասնակիցներին:

Կազմվել է մշտադիտարկման օբյեկտների ցանկը*.

1.	«Ազատ հայրենիք» դաշինք
2.	Ազատական կուսակցություն
3.	«Ազատություն» կուսակցություն
4.	«Ազգային օրակարգ» կուսակցություն
5.	«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն
6.	«Արդար Հայաստան» կուսակցություն
7.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն
8.	«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն
9.	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն
10.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն
11.	«Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն
12.	«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն
13.	«Հայաստան» դաշինք
14.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն
15.	Հայաստանի եվրոպական կուսակցություն
16.	«Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցություն
17.	«Հայոց հայրենիք» կուսակցություն
18.	«Հանրապետություն» կուսակցություն
19.	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն
20.	«Միասնական հայրենիք» կուսակցություն
21.	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք
22.	«Պատիվ ունեմ» դաշինք
23.	«Վերելք» կուսակցություն
24.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն
25.	«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն
26.	«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն

* Կուսակցությունների/դաշինքների ցանկը տրվում է հայերեն այբբենական կարգով:

Անդրադարձների ձևը տարբերակվել է հետևյալ կերպ.

Ա. Մշտադիտարկման օբյեկտին **ամբողջությամբ** նվիրված նյութ

Նյութը համարվում էր մշտադիտարկման օբյեկտին՝ X-ին ամբողջությամբ նվիրված, եթե անգամ նրանում կար անդրադարձ մեկ այլ օբյեկտի՝ Y-ին, կամ էլ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի (թեմաների), բայց այդ անդրադարձը **ածանցյալ** բնույթ ուներ: Ընդ որում, եթե նման նյութում կար անդրադարձ (ածանցյալ բնույթի) մեկ այլ օբյեկտի՝ Y կամ Z, ապա օբյեկտը նույնպես նշվում էր համապատասխան սյունակում՝ կախված նրան անդրադարձի ձևից (մասնակի կամ հիշատակում):

Բ. Մշտադիտարկման օբյեկտին **մասնակի** նվիրված նյութ.

Նյութը համարվում էր մշտադիտարկման օբյեկտին՝ X-ին մասնակի նվիրված, եթե նրանում **հավասարապես** կար անդրադարձ մեկ այլ օբյեկտի՝ Y-ին կամ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի (թեմաների): Ընդամին, եթե նման նյութում հավասարապես առկա էին անդրադարձներ մշտադիտարկման երկու և ավելի օբյեկտի, ապա այդ օբյեկտներից յուրաքանչյուրը նշվում էր «մասնակի» սյունակում:

Գ. Նյութ, որում առկա էր մշտադիտարկման օբյեկտների հիշատակում.

Հիշատակում էին համարվում այն դեպքերը, երբ նյութում մշտադիտարկման օբյեկտները պարզապես անվանվում էին, բայց նրանց մասին լրացուցիչ տեղեկություն, բնութագրություն չէր տրվում:

Որպես հիշատակում են արձանագրվել նաև այն նյութերը, որոնցում արձարծվել է արտասահմանյան այն կուսակցության գործունեությունը, որն ընդհանուր ծագում և պատմություն ունի մշտադիտարկման օբյեկտ հանդիսացած համանուն կուսակցության հետ, բայց միննույն ժամանակ ոչինչ չի ասվել հայաստանյան համանուն կուսակցության հետ արտասահմանյան այդ կուսակցության կապի մասին:

Կուսակցության/դաշինքի այն ներկայացուցչի հանդես գալը նյութում, որը պաշտոնատար անձ է կամ կատարում է ոչ կուսակցական մասնագիտական պարտականություններ, դիտարկվել է որպես անդրադարձ այդ կուսակցությանը/դաշինքին միայն այն դեպքում, երբ նյութում որևէ կերպ ընդգծվել է վերջինիս պատկանելությունը տվյալ կուսակցությանը/դաշինքին: Հետևաբար, նման անդրադարձը հետագոտվել է վերոթվարկյալ և ներքոթվարկյալ բոլոր կատեգորիաներով (անդրադարձի ձևն ու բնույթը):

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր մշտադիտարկման օբյեկտին միայն մեկ անդրադարձ և դրա միայն մեկ ձև:

3. Մշտադիտարկման օբյեկտին անդրադարձների բնույթը նյութերում

Պարզվել և արձանագրվել է նյութում մշտադիտարկման օբյեկտին անդրադարձների բնույթը՝ **դրական (+), բացասական (-) կամ չեզոք (0):**

Նշանային (դրական, բացասական) անդրադարձներ ասելով հասկացվում էին նյութերում առկա այն անդրադարձները, որոնք լսարանի մոտ մշտադիտարկման օբյեկտի մասին միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն էին թողնում: Եթե նման միանշանակություն չկար, անդրադարձն արձանագրվում էր որպես չեզոք: Մշտադիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվում էին հոգուտ անդրադարձը չեզոք հաշվառելուն:

Բացի այդ, եթե նյութում հաղորդվում էր այն մասին, որ որևէ անձ/կազմակերպություն հրապարակայնորեն հայտարարել է ՀՀ արտահերթ խորհրդարանական ընտրություններում այս կամ այն կուսակցությանը/դաշինքին սատարելու/չսատարելու մասին, ապա վերջինիս անդրադարձն արձանագրվում էր որպես համապատասխանաբար դրական/բացասական:

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր մշտադիտարկման յուրաքանչյուր օբյեկտի միայն մեկ բնորոշիչ նշան (+, - կամ 0):

Վերը նշված բոլոր կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր *միավորներով*:

4. Կուսակցություններին/դաշինքներին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված նյութերի եթերաժամանակը

Մշտադիտարկման առարկա դարձած ալիքներում հետազոտվել է նաև խմբագրական լուսաբանման մեջ կուսակցությանը/դաշինքին հատկացված եթերաժամանակը:

Եթե նյութն ամբողջությամբ կամ մասնակի էր նվիրված կուսակցությանը/դաշինքին, ապա պարզվել և արձանագրվել է այն *եթերաժամանակը*, որը տրամադրվել է կուսակցությանը/դաշինքին՝ իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու, ինչպես նաև այլ անձանց՝ նրանց մասին իրենց դատողություններն ու պատմությունները ներկայացնելու համար:

Կուսակցություններին/դաշինքներին իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու կամ նրանց մասին այլոց կողմից դատողություններ անելու կամ պատմելու համար հատկացված եթերաժամանակի չափումն իրականացվում էր հետևյալ սկզբունքով.

1) եթե նյութն ամբողջությամբ նվիրված էր այս կամ այն կուսակցությանը/դաշինքին, ապա դրա ողջ եթերաժամանակը վերագրվել է տվյալ կուսակցությանը/դաշինքին,

2) եթե կուսակցությանը/դաշինքին նվիրվում էր նյութի միայն մի մասը, ապա տվյալ կուսակցությանը/դաշինքին է վերագրվել եթերաժամանակի միայն այն մասը, որը նվիրված էր նրան,

3) եթե X կուսակցությանը/դաշինքին նվիրված նյութում բերվում էին մեկ այլ՝ (X կուսակցությունից/դաշինքից տարբեր) Y կուսակցության/դաշինքի արտահայտությունները կամ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին (*առանց X-ի հետ համեմատության*), ապա Y-ին է վերագրվել նյութի այդ մասի համապատասխան եթերաժամանակը,

4) եթե X կուսակցությանը/դաշինքին նվիրված նյութում ներկայացվում էին X-ի արտահայտությունները մեկ այլ՝ Y կուսակցության/դաշինքի մասին կամ՝ Y-ի արտահայտությունները X-ի մասին կամ՝ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին՝ *X-ի համեմատությամբ*, ապա այդ նյութի եթերաժամանակի *համապատասխան հատվածի 50-ական տոկոսը* մշտադիտարկողները վերագրել են ինչպես X-ին, այնպես էլ Y-ին:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվել է *վայրկյաններով*:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

2021թ. ՀՈՒՆԻՍԻ 7-18

1. Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը, որոնք պարունակել են անդրադարձներ 2021թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին:

2. Կուսակցություններին/դաշինքներին անդրադարձների քանակը և ձևը նյութերում

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը և ձևը, որոնք պարունակել են անդրադարձներ 2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններին/դաշինքներին:

Անդրադարձների ձևը տարբերակվել է հետևյալ կերպ.

Ա. Կուսակցությանը/դաշինքին ամբողջությամբ նվիրված նյութ

Նյութը համարվում էր X կուսակցությանը/դաշինքին ամբողջությամբ նվիրված, եթե անգամ նրանում կար անդրադարձ մեկ այլ՝ Y կուսակցությանը/դաշինքին, կամ էլ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի (թեմաների), բայց այդ անդրադարձը *ածանցյալ* բնույթ ուներ: Ընդ որում, եթե նման նյութում կար անդրադարձ (ածանցյալ բնույթի) մեկ այլ՝ Y կամ Z կուսակցության/դաշինքի, ապա տվյալ կուսակցությունը/դաշինքը նույնպես նշվում էր համապատասխան սյունակում՝ կախված նրան անդրադարձի ձևից (մասնակի կամ հիշատակում):

Բ. Կուսակցությանը/դաշինքին մասնակի նվիրված նյութ.

Նյութը համարվում էր X կուսակցությանը/դաշինքին մասնակի նվիրված, եթե նրանում *հավասարապես* կար անդրադարձ մեկ այլ՝ Y կուսակցությանը/դաշինքին կամ դիտարկման առարկա չհանդիսացող մեկ այլ թեմայի/թեմաների: Ընդամին, եթե նման նյութում հավասարապես առկա էին անդրադարձներ երկու և ավելի կուսակցություններին/դաշինքներին, ապա այդ կուսակցություններից/դաշինքներից յուրաքանչյուրը նշվում էր «մասնակի» սյունակում:

Գ. Նյութ, որում առկա էր կուսակցության/դաշինքի հիշատակում.

Հիշատակում էին համարվում այն դեպքերը, երբ նյութում կուսակցությունները/դաշինքները պարզապես անվանվում էին, բայց նրանց մասին լրացուցիչ տեղեկություն, բնութագրություն չէր տրվում:

Որպես հիշատակում են արձանագրվել նաև այն նյութերը, որոնցում արձարծվել է արտասահմանյան այն կուսակցության գործունեությունը, որն ընդհանուր ծագում և պատմություն ունի մշտադիտարկման օբյեկտ հանդիսացած համանուն կուսակցության հետ, բայց միևնույն ժամանակ ոչինչ չի ասվել հայաստանյան համանուն կուսակցության հետ արտասահմանյան այդ կուսակցության կապի մասին:

Կուսակցության/դաշինքի այն ներկայացուցչի հանդես գալը նյութում, որը պաշտոնատար անձ է կամ կատարում է ոչ կուսակցական մասնագիտական պարտականություններ, դիտարկվել է որպես անդրադարձ այդ կուսակցությանը/դաշինքին միայն այն դեպքում, երբ նյութում որևէ կերպ ընդգծվել է վերջինիս պատկանելությունը տվյալ կուսակցությանը/դաշինքին: Հետևաբար, նման անդրադարձը հետագոտվել է վերոթվարկյալ և ներքոթվարկյալ բոլոր կատեգորիաներով (անդրադարձի ձևն ու բնույթը):

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր յուրաքանչյուր կուսակցությանը/դաշինքին միայն մեկ անդրադարձ և դրա միայն մեկ ձև:

3. Կուսակցություններին/դաշինքներին անդրադարձների բնույթը նյութերում

Պարզվել և արձանագրվել է նյութում կուսակցությանը/դաշինքին անդրադարձների բնույթը՝ **դրական (+), բացասական (-) կամ չեզոք (0):**

Նշանային (դրական, բացասական) անդրադարձներ ասելով հասկացվում էին նյութերում առկա այն անդրադարձները, որոնք լսարանի մոտ կուսակցության/դաշինքի մասին միանշանակ դրական կամ բացասական ընդհանուր տպավորություն էին թողնում: Եթե նման միանշանակություն չկար, անդրադարձն արձանագրվում էր որպես չեզոք: Մշտադիտարկողի բոլոր կասկածները նույնպես մեկնաբանվում էին հոգուտ անդրադարձը չեզոք հաշվառելուն:

Բացի այդ, եթե նյութում հաղորդվում էր այն մասին, որ որևէ անձ/կազմակերպություն հրապարակայնորեն հայտարարել է ՀՀ արտահերթ խորհրդարանական ընտրություններում այս կամ այն կուսակցությանը/դաշինքին սատարելու/չսատարելու մասին, ապա վերջինիս անդրադարձն արձանագրվում էր որպես համապատասխանաբար դրական/բացասական:

Յուրաքանչյուր նյութում արձանագրվում էր յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի միայն մեկ բնորոշիչ նշան (+, - կամ 0):

Վերը նշված բոլոր կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր **միավորներով**:

4. Կուսակցություններին/դաշինքներին ամբողջությամբ կամ մասնակի նվիրված նյութերի եթերաժամանակը

Նախընտրական քարոզարշավի ժամանակ մշտադիտարկման առարկա դարձած ալիքներում հետազոտվել է խմբագրական լուսաբանման մեջ կուսակցությանը/դաշինքին հատկացված եթերաժամանակը:

Եթե նյութն ամբողջությամբ կամ մասնակի էր նվիրված կուսակցությանը/դաշինքին, ապա պարզվել և արձանագրվել է այն **եթերաժամանակը**, որը տրամադրվել է կուսակցությանը/դաշինքին՝ իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու, ինչպես նաև այլ անձանց՝ նրանց մասին իրենց դատողություններն ու պատմությունները ներկայացնելու համար:

Կուսակցություններին/դաշինքներին իրենց հայացքները, կարծիքները արտահայտելու կամ նրանց մասին այլոց կողմից դատողություններ անելու կամ պատմելու համար հատկացված եթերաժամանակի չափումն իրականացվում էր հետևյալ սկզբունքով.

1) եթե նյութն ամբողջությամբ նվիրված էր այս կամ այն կուսակցությանը/դաշինքին, ապա դրա ողջ եթերաժամանակը վերագրվել է տվյալ կուսակցությանը/դաշինքին,

2) եթե կուսակցությանը/դաշինքին նվիրվում էր նյութի միայն մի մասը, ապա տվյալ կուսակցությանը/դաշինքին է վերագրվել եթերաժամանակի միայն այն մասը, որը նվիրված էր նրան,

3) եթե X կուսակցությանը/դաշինքին նվիրված նյութում բերվում էին մեկ այլ՝ (X կուսակցությունից/դաշինքից տարբեր) Y կուսակցության/դաշինքի արտահայտությունները կամ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին (**առանց X-ի հետ համեմատության**), ապա Y-ին է վերագրվել նյութի այդ մասի համապատասխան

Եթերաժամանակը,

4) եթե X կուսակցության/դաշինքին նվիրված նյութում ներկայացվում էին X-ի արտահայտությունները մեկ այլ՝ Y կուսակցության/դաշինքի մասին կամ՝ Y-ի արտահայտությունները X-ի մասին կամ՝ այլ անձանց դատողությունները, պատմությունները Y-ի մասին՝ **X-ի համեմատությամբ**, ապա այդ նյութի եթերաժամանակի **համապատասխան հատվածի 50-ական տոկոսը** մշտադիտարկողները վերագրել են ինչպես X-ին, այնպես էլ Y-ին:

Այս կատեգորիայում հաշվարկը կատարվել է **վայրկյաններով**:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ԴԱՇԻՆՔՆԵՐ

Մշտադիտարկման օբյեկտ են դարձել 22 կուսակցություն և 4 դաշինք, որոնք ՀՀ ԿԸՀ-ում գրանցվել են 2021թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ*

1.	«Ազատ հայրենիք» դաշինք
2.	Ազատական կուսակցություն
3.	«Ազատություն» կուսակցություն
4.	«Ազգային օրակարգ» կուսակցություն
5.	«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն
6.	«Արդար Հայաստան» կուսակցություն
7.	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն
8.	«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն
9.	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն
10.	«Լուսավոր Հայաստան» կուսակցություն
11.	«Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն
12.	«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն
13.	«Հայաստան» դաշինք
14.	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն
15.	Հայաստանի եվրոպական կուսակցություն
16.	«Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցություն
17.	«Հայոց հայրենիք» կուսակցություն
18.	«Հանրապետություն» կուսակցություն
19.	«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն
20.	«Միասնական հայրենիք» կուսակցություն
21.	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք
22.	«Պատիվ ունեմ» դաշինք
23.	«Վերելք» կուսակցություն
24.	«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն
25.	«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն
26.	«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն

* Կուսակցությունների/դաշինքների ցանկը տրվում է հայերեն այբբենական կարգով:

**ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2021
ԴԱՇԻՆՔՆԵՐ ԿԱԶՄԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ**

1.	«Ազատ հայրենիք» դաշինք. Պահպանողական կուսակցություն «Ազգային ժողովրդավարների դաշինք» կուսակցություն Ազգային ինքնորոշում միավորում կուսակցություն Հայ Կառուցողական Կուսակցություն Հայաստանի կանաչների կուսակցություն
2.	«Հայաստան» դաշինք. «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն «Վերածնվող Հայաստան» կուսակցություն
3.	«Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք». «Հանուն Հանրապետության ԺՊԴ» կուսակցություն Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցություն
4.	«Պատիվ ունեմ» դաշինք. «Հայրենիք» կուսակցություն Հայաստանի Հանրապետական կուսակցություն

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ, ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

2021թ. ՀՈՒՆԻՍԻ 20 (20.00 մինչև 02.00), ՀՈՒՆԻՍԻ 21 - ՀՈՒԼԻՍԻ 4

1. Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը

Պարզվել և արձանագրվել է այն նյութերի քանակը, որոնք պարունակել են անդրադարձներ 2021թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներին, այդ ընտրություններին հայաստանյան հասարակության և միջազգային հանրության տարբեր խմբերի կողմից տրված գնահատականներին և ընդհանուր առմամբ հետընտրական գործընթացներին:

Ընդ որում, 2021թ. հունիսի 20-ին, ժամը 20.00-ից (քվեարկության ավարտից) մինչև 02.00 հետազոտության առարկա են դարձել հետազոտված հեռուստաալիքների ամբողջ եթերը: Հետագա օրերին (2021թ. հունիսի 21-ից հուլիսի 4-ը), ինչպես և նախկինում, յոթ հեռուստաալիքներում հետազոտվել են երեկոյան պրայմ-թայմին (18.00-00.00) հեռարձակվող լրատվական ծրագրի հիմնական թողարկումը, լրատվական-վերլուծական ծրագրերը և հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները:

2. Հեղինակների կողմից ընտրություններին/հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը նյութերում

Պարզվել և արձանագրվել է ընտրություններին/հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը:

Կազմվել է անդրադարձների հեղինակների ցուցակը:

ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

1.	ՀՀ պետական պաշտոնական մարմիններ
2.	Խորհրդարանական ընտրություններում հաղթած քաղաքական ուժը («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն)
3.	Խորհրդարանական ընտրություններում անցումային շեմը հաղթահարած քաղաքական ուժերը («Հայաստան» դաշինք, «Պատիվ ունեմ» դաշինք)
4.	Խորհրդարանական ընտրություններին մասնակցած, սակայն անցումային շեմը չհաղթահարած քաղաքական ուժերը* <ul style="list-style-type: none"> • «Ազատ հայրենիք» դաշինք • Ազատական կուսակցություն • «Ազատություն» կուսակցություն • «Ազգային օրակարգ» կուսակցություն • «Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն • «Արդար Հայաստան» կուսակցություն • «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն • «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն • «Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն • «Լուսավոր Հայաստան» կուսակցություն • «Համահայկական ազգային պետականություն» կուսակցություն • «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն • Հայաստանի դեմոկրատական կուսակցություն • Հայաստանի եվրոպական կուսակցություն • «Հայոց հայրենիք» կուսակցություն • «Հանրապետություն» կուսակցություն • «Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն • «Միասնական հայրենիք» կուսակցություն • «Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք» դաշինք • «Վերելք» կուսակցություն • «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն • «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն
5.	Հայաստանյան այլ քաղաքական գործիչներ
6.	Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցներ
7.	Տեղական դիտորդներ/մշտադիտարկման խմբեր
8.	Քաղաքացիական հասարակություն/Փորձագիտական հանրություն
9.	Սոցիոլոգիական հարցումներ/հետազոտություններ, Exit polls/Էքզիթ փոլեր, Vox populi/շարքային քաղաքացիներ
10.	ԶԼՄ-ներ/լրագրողներ/սոցցանցեր
11.	Այլ

* Կուսակցությունների/դաշինքների ցանկը տրվում է հայերեն այբբենական կարգով:

Այստեղ և այսուհետ գործել է հետևյալ սկզբունքը. միևնույն նյութում միևնույն հեղինակի անդրադարձը (բնորոշիչ նշանը) մշտադիտարկման թեմային արձանագրվել է մեկ անգամ, անկախ այն բանից, թե այն քանի անգամ է կրկնվել նյութում: Եթե նյութում կային մի քանի հեղինակների անդրադարձները մշտադիտարկման թեմային, ապա դրանք բոլորը (ինչպես նաև բնորոշիչ նշանը) արձանագրվել են համապատասխան սյունակներում:

3. Նյութերում անդրադարձների հեղինակների կողմից ընտրությունների /հետընտրական գործընթացների գնահատականը

Պարզվել և արձանագրվել է նյութում առկա՝ անդրադարձի հեղինակի վերաբերմունքը ընտրություններին/հետընտրական գործընթացներին.

- դրական (+)
- բացասական (-)
- չեզոք (0)

Ընդ որում, այստեղ նույնպես գործել է 2-րդ կետում նկարագրված սկզբունքը:

Մշտադիտարկողի բոլոր կասկածները բնորոշիչ նշանի անորոշության կապակցությամբ մեկնաբանվել են հոգուտ անդրադարձը չեզոք հաշվառելուն:

Վերը նշված բոլոր կատեգորիաներում հաշվարկը կատարվում էր *միավորներով*:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԶԼՄ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ

ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ - 2001թ.

հիմնադրված Հանրային հեռուստառադիոընկերության բաղկացուցիչ մասն է: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել.

- «Լուրեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 21.00, և կիրակնօրյա 21.00-ի թողարկումը, հունիսի 21-ին հետազոտվել է «Լուրերի» թողարկումը, որը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետընտրական հանրահավաքի հեռարձակման կապակցությամբ սկսվել էր ավելի վաղ՝ 20.00-ին),
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները՝ «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ», «Հարցազրույց Աստղիկ Սարգսյանի հետ», «Հանրային քննարկում»,
- նախընտրական բանավեճերը՝ «Հայաստանն ընտրում է» (հունիսի 8-ին, 11-ին, 16-ին և 17-ին),
- հունիսի 20-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

Ա-ԹԻՎԻ - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2010թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հետազոտության առարկա են եղել.

- «Այսօր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-ուրբաթ՝ 19.30),
- հունիսի 20-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

«ԱՐՄԵՆԻԱ» - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1998թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել.

- «Ժամը» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 20.00), հունիսի 12-ից ֆուտբոլային խաղերի ուղիղ հեռարձակման օրերին՝ հիմնական թողարկումը եղել է 19.00-ին,
- հունիսի 20-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2004թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել.

- «Երկիրն այսօր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ և կիրակնօրյա թողարկումը՝ 22.30-ին, այլ հաղորդումների հեռարձակման կապակցությամբ հունիսի 1-ին հետազոտվել է ժամը 20.30-ի թողարկումը, հունիսի 13-ին՝ 18.30-ի, հունիսի 15-ին՝ 20.30-ի), «Երկիրն այսօրի» շրջանակներում հեռարձակվել են նաև ընտրություններին

նվիրված լուրերի հատուկ թողարկումներ և հաղորդումներ՝ «Ձայն բազմաց», «Արտակարգ թողարկում»,

- «Երկիրն այսօրի» շրջանակներում հեռարձակվող «հյուր տաղավարում» ձևաչափի «Երկրի հյուսրասրահ» հաղորդումը (երեկոյան 20.30-ի թողարկումից հետո),
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները՝ «Երկրի հարցը», «Ազգային օրակարգ», «Շահերի խաչմերուկում»,
- հունիսի 20-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

«ԿԵՆՏՐՈՆ» - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 2004թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել.

- «Էպիկենտրոն» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 21.30, հունիսի 13-ին հետազոտվել է «Էպիկենտրոնի» կիրակնօրյա թողարկումը՝ 21.30),
- «հյուր տաղավարում» ձևաչափի «Իմպուլս» հաղորդումը (երկուշաբթի-ուրբաթ, 22.20),
- «Անցուդարձ» լրատվական հաղորդումը (երեքշաբթի-շաբաթ, 20.10, հունիսի 7-21-ը հաղորդումը չի հեռարձակվել),
- հունիսի 20-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

«ՇԱՆԹ» - մասնավոր համազգային հեռուստաընկերություն: Հիմնադրվել է 1994թ.: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Հեռուստաալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել.

- «Հորիզոն» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 22.00),
- «հյուր տաղավարում» ձևաչափի «Հեռանկար» հաղորդումը, հունիսի 7-18-ը հեռարձակվել է օրական երկու անգամ,
- հունիսի 20-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ - 2001թ. հիմնադրված Հանրային հեռուստառադիոընկերության բաղկացուցիչ մասն է: Ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ: Օրական հեռարձակման տևողությունն է՝ 24 ժամ: Ռադիոալիքի հաղորդումները արբանյակային կապով մատչելի են նաև արտերկրում: Հետազոտության առարկա են եղել.

- «Ռադիոլուր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ՝ 18.00),
- «հյուր տաղավարում» ձևաչափի «Ստատուս քվո» և «Քաղաքական շաբաթօրյակ» հաղորդումները (եթեր է հեռարձակվել մեկ անգամ՝ հունիսի 5-ին),
- հունիսի 20-ին [20.00-ից՝ քվեարկության ավարտ, մինչև 02.00] հետազոտվել է ողջ եթերը:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ
Երրորդ փուլ. 2021թ. ՀՈՒՆԻՍԻ 20 - ՀՈՒԼԻՍԻ 4

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք, Ա-ԹԻՎԻ, «Արմենիա»,
«Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ», Հայաստանի հանրային ռադիո

2021թ. հունիսի 20 (20.00-ից մինչև 02.00-ն) - հուլիսի 4

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված նյութերի ընդհանուր քանակը (միավոր)					836
	ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ	Հեղինակների կողմից ընտրություններին/ հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը (միավոր)	Անդրադարձների հեղինակների կողմից ընտրություններին/հետընտրական գործընթացների գնահատականը (միավոր)		
			+	-	0
1.	ՀՀ պետական պաշտոնական մարմիններ	328	6	86	236
2.	Խորհրդարանական ընտրություններին մասնակցած, սակայն անցումային շեմը չհաղթահարած քաղաքական ուժերը	247	8	38	201
3.	Խորհրդարանական ընտրություններում անցումային շեմը հաղթահարած քաղաքական ուժերը («Հայաստան» դաշինք, «Պատիվ ունեմ» դաշինք)	162	0	135	27
4.	ԶԼՄ-ներ/լրագրողներ/սոցցանցեր	159	0	38	121
5.	Այլ	134	10	12	112
6.	Խորհրդարանական ընտրություններում հաղթած քաղաքական ուժը («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն)	87	22	2	63
7.	Քաղաքացիական հասարակություն/Փորձագիտական հանրություն	73	10	38	25
8.	Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցներ	51	12	0	39
9.	Սոցիոլոգիական հարցումներ/հետազոտություններ, Exit polls/էքզիթ փոլեր, Vox populi/շարքային քաղաքացիներ	15	0	8	7
10.	Տեղական դիտորդներ/մշտադիտարկման խմբեր	13	0	11	2
11.	Հայաստանյան այլ քաղաքական գործիչներ	12	5	2	5
	Ընդամենը (միավոր)	1281	73	370	838

Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք

2021թ. հունիսի 20 (20.00-ից մինչև 02.00-ն) - հուլիսի 4

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված կյուրերի ընդհանուր քանակը (միավոր)					166
	ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ	Հեղինակների կողմից ընտրություններին/ հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը (միավոր)	Անդրադարձների հեղինակների կողմից ընտրությունների/հետընտրական գործընթացների գնահատականը (միավոր)		
			+	-	0
1.	ՀՀ պետական պաշտոնական մարմիններ	101	6	23	72
2.	Այլ	35	3	1	31
3.	Խորհրդարանական ընտրություններին մասնակցած, սակայն անցումային շեմը չհաղթահարած քաղաքական ուժերը	30	2	8	20
4.	Խորհրդարանական ընտրություններում հաղթած քաղաքական ուժը («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն)	27	10	0	17
5.	Խորհրդարանական ընտրություններում անցումային շեմը հաղթահարած քաղաքական ուժերը («Հայաստան» դաշինք, «Պատիվ ունեմ» դաշինք)	20	0	15	5
6.	Քաղաքացիական հասարակություն/Փորձագիտական հանրություն	16	9	0	7
7.	ԶԼՄ-ներ/լրագրողներ/սոցցանցեր	13	0	1	12
8.	Տեղական դիտորդներ/մշտադիտարկման խմբեր	10	0	8	2
9.	Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցներ	8	2	0	6
10.	Հայաստանյան այլ քաղաքական գործիչներ	4	3	0	1
11.	Սոցիոլոգիական հարցումներ/հետազոտություններ, Exit polls/էքզիթ փոլեր, Vox populi/շարքային քաղաքացիներ	4	0	2	2
	Ընդամենը (միավոր)	268	35	58	175

Ա-ԹԻՎԻ հեռուստաալիք

2021թ. հունիսի 20 (20.00-ից մինչև 02.00-ն) - հուլիսի 4

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված կյուրերի ընդհանուր քանակը (միավոր)					67
	ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ	Հեղինակների կողմից ընտրություններին/ հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը (միավոր)	Անդրադարձների հեղինակների կողմից ընտրությունների/հետընտրական գործընթացների գնահատականը (միավոր)		
			+	-	0
1.	ՀՀ պետական պաշտոնական մարմիններ	32	0	10	22
2.	Խորհրդարանական ընտրություններին մասնակցած, սակայն անցումային շեմը չհաղթահարած քաղաքական ուժերը	32	3	7	22
3.	Խորհրդարանական ընտրություններում անցումային շեմը հաղթահարած քաղաքական ուժերը («Հայաստան» դաշինք, «Պատիվ ունեմ» դաշինք)	12	0	10	2
4.	ԶԼՄ-ներ/լրագրողներ/սոցցանցեր	7	0	2	5
5.	Խորհրդարանական ընտրություններում հաղթած քաղաքական ուժը («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն)	6	4	0	2
6.	Այլ	6	1	1	4
7.	Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցներ	3	2	0	1
8.	Հայաստանյան այլ քաղաքական գործիչներ	2	1	0	1
9.	Քաղաքացիական հասարակություն/Փորձագիտական հանրություն	1	0	1	0
10.	Սոցիոլոգիական հարցումներ/հետազոտություններ, Exit polls/էքզիթ փոլեր, Vox populi/շարքային քաղաքացիներ	1	0	1	0
11.	Տեղական դիտորդներ/մշտադիտարկման խմբեր	0	0	0	0
Ընդամենը (միավոր)		102	11	32	59

«Արմենիա» հեռուստաալիք

2021թ. հունիսի 20 (20.00-ից մինչև 02.00-ն) - հուլիսի 4

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված կյուրերի ընդհանուր քանակը (միավոր)					67
	ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ	Հեղինակների կողմից ընտրություններին/ հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը (միավոր)	Անդրադարձների հեղինակների կողմից ընտրությունների/հետընտրական գործընթացների գնահատականը (միավոր)		
			+	-	0
1.	Խորհրդարանական ընտրություններին մասնակցած, սակայն անցումային շեմը չհաղթահարած քաղաքական ուժերը	33	3	5	25
2.	ՀՀ պետական պաշտոնական մարմիններ	29	0	8	21
3.	Խորհրդարանական ընտրություններում անցումային շեմը հաղթահարած քաղաքական ուժերը («Հայաստան» դաշինք, «Պատիվ ունեմ» դաշինք)	15	0	13	2
4.	Այլ	12	0	1	11
5.	Խորհրդարանական ընտրություններում հաղթած քաղաքական ուժը («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն)	8	4	0	4
6.	ԶԼՄ-ներ/լրագրողներ/սոցցանցեր	7	0	1	6
7.	Միջազգային/օտարերկրյա դիտորդներ/կառույցներ	4	1	0	3
8.	Քաղաքացիական հասարակություն/Փորձագիտական հանրություն	3	0	3	0
9.	Հայաստանյան այլ քաղաքական գործիչներ	2	1	0	1
10.	Սոցիոլոգիական հարցումներ/հետազոտություններ, Exit polls/էքզիթ փոլեր, Vox populi/շարքային քաղաքացիներ	1	0	1	0
11.	Տեղական դիտորդներ/մշտադիտարկման խմբեր	0	0	0	0
	Ընդամենը (միավոր)	114	9	32	73

«Երկիր Մեդիա» հեռուստաալիք

2021թ. հունիսի 20 (20.00-ից մինչև 02.00-ն) - հուլիսի 4

Մշտադիտարկման թեմային անդրադարձներ պարունակող հետազոտված կյուբերի ընդհանուր քանակը (միավոր)				166	
	ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ	Հեղինակների կողմից ընտրություններին/ հետընտրական գործընթացներին անդրադարձների քանակը (միավոր)	Անդրադարձների հեղինակների կողմից ընտրությունների/հետընտրական գործընթացների գնահատականը (միավոր)		
			+	-	0
1.	Խորհրդարանական ընտրություններում անցումային շեմը հաղթահարած քաղաքական ուժերը («Հայաստան» դաշինք, «Պատիվ ունեմ» դաշինք)	52	0	46	6
2.	ՀՀ պետական պաշտոնական մարմիններ	44	0	11	33
3.	ԶԼՄ-ներ/լրագրողներ/սոցցանցեր	31	0	9	22
4.	Քաղաքացիական հասարակություն/Փորձագիտական հանրություն	28	0	26	2
5.	Այլ	27	0	7	20
6.	Խորհրդարանական ընտրություններին մասնակցած, սակայն անցումային շեմը չհաղթահարած քաղաքական ուժերը	26	0	9	17
